

Մ-35

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԳԵՎՈՐԳԻ

ՌԱԶՄԱԶԱՐԱԶԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՄԵՐԶԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ  
ԵՎ ՀԱՅ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ԱՎԱԳԱՆԻՆ ԺԲ ԴԱՐՈՒՄ-ԺԴ ԴԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

Է.00.02

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ  
ՀԱՅՑԻՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՏՈՒԹՅԱՆ  
ՍԵՂՄԱԳԻՐ

*ՉՐԿԷՄՐԳՈՒ ԱԿԱԳ. ՉՐԱՆՎԵԿ ԶԱՄԱՆԺԱՆԻՆ,  
ԱՅՍԱ ԱՇԽԱՏԱՆԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԽՈՐԻՔ ԿԱՐԳԱՆԻՔԻ ԿԵՂԻՆԱԿԻՅԷ:*

18.6.1996թ. *ՀԱՄԱՆ*

ԵՐԵՎԱՆ-1996

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտություն ինստիտուտի  
Քրիստոնյա Արևելքի բաժնում

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍՆԵՐ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր

Վ. Բ. ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր

Մ. Կ. ԶՈՒՂԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

Վ. Մ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի պետական համալսարանի

Հին և միջին դարերի պատմության ամբիոն

Պաշտպանությունը տեղի կունենա 1996 թ. հունիսի 17 ին ժամը 14 ին

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող  
պատմության բնագավառի 006 մասնագիտական խորհրդի նիստում (Հասցեն՝  
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24գ)

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Արևելագիտության

ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրը առաքված է 1996 թ. ապրիլի 17 ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու

(Ա. Վ. Քոսրյան)

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. Ժամանակակից  
միջնադարագիտության մեջ սոցիալական կառույցների և դրանց զար-  
գացման օրինաչափությունների, սոցիալական պրակտիկայի և արտա-  
քին քաղաքական գործոնների փոխազդեցությունների հետազոտու-  
թյանն առանձնահատուկ նշանակություն է տրվում: Այս հայեցակե-  
տից Հայաստանի ԺԲ դարի-ԺԴ դարի առաջին կեսի տիրապետող դա-  
սակարգի և նրա առանձին շերտերի կազմի, քաղաքական կազմակեր-  
պության, զարգացման միտումների ուսումնասիրությունն առաջնա-  
հերթ գիտական կարևորություն է ներկայացնում: Այն որոշակի նպաստ  
կարող է բերել Հայաստանում ավատատիրական հասարակարգի ընդ-  
հանուր օրինաչափությունների և տեղական առանձնահատուկությու-  
նների պարզաբանմանը, ավատատիրական հարաբերությունների հա-  
մակարգում տեղի ունեցած տրպարանական տեղաշարժերի բացահայտ-  
մանը: Ակներև է նաև այն բացառիկ նշանակությունը, որն ունի ավա-  
տատերերի դասակարգի հետազոտությունը, դարաշրջանի սոցիալ-քա-  
ղաքական զարգացման միտումների ուղղվածությունը և հայոց պե-  
տականության ճակատագիրը ճիշտ ըմբռնելու տեսանկյունից: Ավելին,  
հայ տիրապետող դասակարգի և նրա վերնախավի՝ ավատատիրական  
ավագանու ուսումնասիրությունն անհամեմատ կարևոր և ընդգրկուն՝  
հայոց պետականության պատմության և էթնոպաշտպանիչ կառուցա-  
կարգերի, գիտական խնդրի լուսաբանման քաղկացուցիչ մասն է կազ-  
մում: Հետևաբար, ԺԲ դարի-ԺԴ դարի առաջին կեսի հայ խոշոր իշխա-  
նական տների կազմավորման պայմանների և ընթացքի, գերակա-ստո-  
րակայական փոխհարաբերությունների, օտար տերությունների հետ  
փոխադարձ առնչությունների հետազոտությունը՝ արդի միջնադարա-  
գիտության առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից է:

Հետազոտվող հարյուրամյակների ընթացքում ավելի ուժեղացավ  
Մերձավոր Արևելքում ծավալված ազգամաքաղաքական իրադարձու-  
թյունների՝ հայոց պատմության վրա թողած ազդեցությունը: Արտա-  
քին քաղաքական գործոնները հատկապես կարևոր դեր խաղացին հայ  
տիրապետող դասակարգի ճակատագրում, մեծապես պայմանավորելով  
նրա կյանքում գիտվող մակրնթացություններն ու տեղատվություննե-  
րը: Հայ ավատատերերի ԺԲ-ԺԴ դարերի պատմության հետազոտու-  
թյունն անհնար է պատկերացնել՝ առանց «Մեծ սելջուկների», Իրաքի և  
Իկոնիայի սելջուկյան սուլթանությունների, Խորեզմշահների, Իրանի  
մոնղոլական (խիսանություն) պետությունների, Վրացական թագավո-  
րության արտաքին և նույնիսկ ներքին քաղաքականության առանց-  
քային խնդիրների լուսաբանության: Ուսումնասիրվող դարաշրջանում  
Հայաստանում գործող ավատատիրական ընտանիքներն անընդհատ  
բախվում էին հարափոփոխ աշխարհաքաղաքական իրադրության հետ,  
որի մեջ կատարվող տեղաշարժերը թելադրվում էին գերազանցապես  
ազգամաքաղաքական անցուղարձեբով: Արդի հետազոտողների առաջ-  
նահերթ խնդիրներից է կղզիացած և մեկուսի հերկայացնել հայ իշխա-  
նական տների հարուստ պատմությունը, այն վերհանելով արտաքին  
աշխարհի հետ բարդ ու հաճախ հակասական փոխհարաբերություննե-  
րի և փոխազդեցությունների լայն, ամբողջ մերձավորարևելյան տա-  
րածաշրջանն ընդգրկող ետնախորքի վրա: Թերևս, հայ տիրապետող  
դասակարգի կենսագործունեության արտաքին քաղաքական միջավայ-  
րի ուսումնասիրությունը ոչ պակաս կարևորություն ունի, որքան հայ

ավատատերերի քաղաքական կազմակերպութեան, գանազան շերտերի առանձնահատկութիւնների և գաղափարախոսութեան հետազոտութիւնը:

Արտաքին քաղաքական գործոնների դերը ծանրակշիռ է եղել հատկապէս հայ տիրապետող դասակարգի վերնախավի՝ ավատատիրական ավագանու ճակատագրում: Պատմութեան շրջադարձային պահերին հայ ավատատերերի այդ շերտն է առաջին հերթին կողմնորոշվել և մշակել (ազգային եկեղեցու դեկլարութեան մասնակցութեամբ) հայոց քաղաքական ուղեգիծը: Ավատատիրական ավագանու վարքագծի և կողմնորոշումների մեջ իրենց արտացոլումն են գտել նաև ավատատերերի զանազան շերտերի համար առավել ընդհանուր երևույթներն ու զարգացման միտումները: Ուստի այդ վերնախավային շերտի հետազոտութիւնն անխուսափելի է անհրաժեշտ քայլ է ավատատերերի դասակարգի ավելի ընդգրկուն և համակողմանի ուսումնասիրութեան ճանապարհին: Ավագանու պատմութեան պարզաբանումը բանալի կարող է ծառայել հայ ավատատերերի մնացած խմբերի (միջին շերտ, մանր ազնվականներ, միջինտերիախեա) դրութիւնը, կարգավիճակը, համարման ուղիները բացահայտելու և լուսաբանելու համար: Հայտնի է, որ ավագանու քաղաքական և մշակութային կողմնորոշումները հետախոնային բնույթ են ստացել ավատատերերի այլևայլ շերտերի համար: Արխատոկրատիկ յուրաքանչյուր բնութանքի պատմութիւն յուրօրինակ առանցք է այդ տոհմի շուրջը համախմբված ստորականների բազմամարդ խմբի տիրութեան տեղորոշման, գործունեութեան փուլերի, քաղաքական, տնտեսական և մշակութային ակտիվութեան դրսևորումների և շատ այլ հարցերի հետազոտութեան համար: Ուստի օրամադրութեան տակ ունենալով ավատատիրական առավել ազդեցիկ ընտանիքների տոհմագրութիւնը, պատմութեան ժամանակագրական ուղենիշները, քաղաքական, տնտեսական և մշակութային դիրքորոշումների համայնապատկերը՝ համեմատաբար դյուրին կղաւնա ողջ ավատատիրական դասակարգի համակարգված ուսումնասիրութիւնը:

**ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐ ՆԵՐՐ:** Ատենախոսութեան նպատակն է եղել ԺԲ դարի-ԺԴ դարի առաջին կեսի հայ ավատատիրական ավագանու պատմութեան հանդուցային հարցերի հետազոտութիւնը՝ մերձավորարևելյան տարածաշրջանի ռազմաքաղաքական կացութեան հետ սերտ առնչութիւնների և փոխկապակցվածութեան մեջ, խորամուխ լինել սոցիալական պատմութեան խնդիրների մեջ՝ նախապես վերհանելով սոցիալական կառույցների կենսագործունեութեան արտաքին քաղաքական միջավայրը: Նկատի առնելով ռազմաքաղաքական և սոցիալական բնույթի երևույթների և իրողութիւնների շաղկապվածութիւնը և համատեղ ուսումնասիրման նպատակահարմարութիւնը՝ ատենախոսութիւնում անհրաժեշտ է համարվել արծարծել հարցերի որոշակի շրջանակ:

Աշխատութեան գլխավոր խնդիրներից են եղել.  
Բացահայտել տարածաշրջանի ռազմաքաղաքական կացութեան մեջ կատարվող այն շրջադարձերը, որոնք ուղղակի կամ միջնորդավորված ձևերով ազդում էին Հայաստանի արտաքին և ներքին դրութեան վրա:  
Պարզաբանել հայ ավատատերերի գործունեութիւնը, նրանց շահագրգռութիւններն ու ձգտումները Հայաստանից դուրս: Մասնավորապես, բացորոշել հայ իշխանական տների դերն ու կշիռը Արացական

Թագավորութիւնում և իրխանութիւնում, ցույց տալ նրանց նկատելի մասնակցութիւնն այդ պետութիւններում ընթացող ներքաղաքական պայքարին և սոցիալական գործընթացներին:

Լուսաբանել հայ ավատատերերի ռազմական վաստակը, վերհանել նրանց մասնակցութիւնը Մերձավոր Արևելքում ծավալված քաղաքական անցուղարձեղներին:

Մրազրավորված համակողմանի հետազոտութեան ենթարկել ավատատիրական ավագանին կազմող հիմնական իշխանական տոհմերը, յուրաքանչյուր բնութանքի անդրադառնալով պրոսոպոգրաֆիկ բնույթի առանձին հետազոտութիւններով:

**ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Հայ ավատատիրական ավագանու գործունեութեան արտաքին պայմանների ուսումնասիրութիւնը զուգակցվել է նրա սոցիալական պատմութեան հետազոտութեան հետ: Ուստի ատենախոսութեան առաջին բաժնում հայ ավատատերերի գործունեութեան արտաքին միջավայրը ներկայացնելուց հետո՝ երկրորդ բաժնում ուշադրութիւնը սեռվել է սոցիալական պատմութեան խնդիրների վրա: Հարցերի այդ խմբի ուսումնասիրութիւնը մտահոգացվել և իրականացվել է հետևյալ հիմնական սկզբունքներով:

Առաջին. առանձին տոհմերի մասին գլուխները շարադրել ենք հստակ և միասնական ծրագրով, որը և հնարավորութիւն է ընձեռում՝ զանգվածային և համեմատելի նյութ ստանալ ընդհանրացումների և հետագա խորագնահատութիւնների համար: Այսպես, հարցաբար անդրադարձել ենք ուսումնասիրվող տոհմի անվանման ու ծագման, պատմության պարբերացման և գործունեության հակիրճ բնութագրման, տիրույթների տեղադրության ու տարածքային կապերի, քաղաքական ու մշակութային ակտիվության, դավանական կողմնորոշման ու էթնոշնչակութային դիմապատկերի հարցերին:

Երկրորդ. յուրաքանչյուր բնութանքին նվիրված հետազոտութեան շրջանակներում կանգ ենք առել նաև տոհմի առանց բացառութեան ամեն մի անդամի վրա, վեր հանել նրա կյանքի և գործունեութեան գլխավոր ուղենիշները: Ընդ որում, դարձյալ ձգտել ենք պատասխան տալ միևնույն հետազոտական խնդիրներին, որոնք առաջադրվել են տոհմերի ուսումնասիրման կապակցութեամբ: Բայց և, թե՛ տոհմերի և թե՛ նրանց ներկայացուցիչների պարագայում, աշխատել ենք որքան հնարավոր է լրացուցիչ փաստեր և տվյալներ ընդգրկել՝ քաղելով դրանք նախապես կազմված տոհմային և անհատական հարցաթերթիկա-անկետաներից: Հավաքված նյութերը օգնում են ամբողջական պատկերացում կազմել խոշոր ավատատիրական տոհմերի և նրանց ակնափոր անդամների ռազմաքաղաքական գործունեութեան, դավանական կողմնորոշման, մշակութային դիմապատկերի և նույնիսկ առանձին անհատների անձնական հատկանիշների վերաբերյալ:

Երրորդ. առանձին տոհմերին հատկացված գլուխների տոհմագրական բնույթի գիտարկումների արդյունքները ներկայացրել ենք համապատասխան ենթաբաժինների վերջում՝ տոհմաձառի տեսքով: Պարտադիր պայման ենք համարել տոհմաձառում պատկերել բնութանքների միայն այն անդամներին, որոնց մասին պահպանված տվյալները նախապես քննարկվել են ատենախոսութեան էջերում: Այդպիսով, ձգտել ենք դյուրութեամբ վերահսկելի և ստուգելի դարձնել կատարված եզրակացութիւնների փաստական հիմքերը:

**ԳՐՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.** Ատենախոսությունում առաջին անգամ Համակարգված հետազոտություն է ենթարկվում ԺԲ-ԺԴ դարերի Հայ ավատատիրական ավագանու պատմությունը՝ արտաքին աշխարհի հետ բազմազան կապերով ու փոխազդեցություններով, ինչպես նաև դարաշրջանի իրականությունից մեջ իր խաղաղացած բազմակողմանի դերի բոլոր դրսևորումների արձանագրումով ու վերլուծություններով: Հայաստանի սոցիալ-քաղաքական պատմություն կենտոտ Հարցերին պատասխան տալու ձգտումը թեյադրել է Հայոց պատմությունը առավելազույն չափով կապակցել Մերձավոր Արևելքում ծավալված ռազմաքաղաքական անցուղարձերի հետ: Աշխատությունում ցույց է արված ինչպես օտար նվաճողների, նրանց հաստատում կարգերի և պարտադրած տնտեսաձևի ազդեցությունը Հայ ավատատիրների ճակատագրում (Հարցերի հետազոտությունում նման Հայեցակետը կարելի է ավանդական համարել), այլև նպատակադիր կերպով վեր է հանվում Հայ իշխանական տոհմերի անդամների և նրանց առաջնորդած ռազմական ուժերի պայլի դերը Վրաստանում և մոնղոլական իշխանությունում:

Ատենախոսությունում ծրագրավորված կերպով ուսումնասիրվել է Հայ ավատատիրների վերնախավի այն մասի պատմությունը, որի երևան գալը, բարձրացումը և անկումը ժամանակագրական միևնույն շրջանակներում է տեղի ունեցել: Հայ ավատատիրական ավագանու շարքում հետազոտություն է ենթարկվել Զաքարյանների, Մահկանաբերդցիների (Սաղունյանների), Վաչուսյանների և Խաղբակյանների (Պոռչյանների) իշխանական տոհմերի պատմությունը: Այդ ավատատիրական ընտանիքները ծանրակշիռ դեր էին կատարում երկրի կյանքում ուսումնասիրվող ողջ ժամանակաշրջանի ընթացքում, ընդ որում այդ տոհմերի պատմությունը բնութագրական է՝ արտաքին քաղաքական և ներքին սոցիալական զարգացումների փոխադարձ առնչությունները բնութայնու տեսանկյունից: Այդ տոհմերը հնարավոր է միավորել նաև «նոր ավագանի» բնորոշումով, քանի որ բոլորն էլ պատմական ասպարեզ են ինչև սելուկ-թյուրքական արշավանքներին հաջորդող ժամանակաշրջանում և առավել բարձր դիրքի հասել ԺԲ-ԺԳ դարերում: ԺԴ դարի առաջին կեսում այդ ընտանիքներն աստիճանաբար վերջին իրենց դիրքերը և թողեցին ասպարեզը մինչև լենկիթեմուրյան արշավանքները:

Ատենախոսությունը ընդհանրացնում է ուսումնասիրողների նախորդ սերունդների կուտակած հսկայական նյութը և այդ հիման վրա նոր հարցադրումներ կատարում: Միաժամանակ՝ աշխատությունում ճշգրտված տոհմագրությունները, իշխանական տների տիրությունների կազմի և տեղորոշման պարզաբանումները, ժամանակագրական ստուգված ուղենիշները, փաստարկված և ընդունված (որոշ դեպքերում՝ մերժված) նույնանձնացումները, որոշակի հետևողականությամբ բերվող փաստերը ազդակ կարող են դառնալ հետագա պրպատումների համար:

**ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ.** Ատենախոսություն մի շարք հատվածներ հորվածի տեսքով տպագրվել են գիտական մամուլում և ժողովածուներում, ընթերցվել միջազգային (Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, Երևան, 15-19 սեպտեմբերի, 1986 թ., Զեկուցումների գրույթներ, Երևան, 1986, էջ 125-126, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ա-

մյակին նվիրված միջազգային գիտաժողով, Երևան, 1-4 հոկտեմբերի, 1991 թ., Միջազգային գիտաժողովի գրույթներ, Երևան, 1991, էջ 18-50, Միջազգային գիտաժողով՝ Մովսես Խորենացին և միջնադարի մեջ Հայ պատմագրությունը, Նիւ Եորք, մայիս 22-23, 1992 թ., Նիւ Եորք, 1992, էջ 11-12), նախկին միութենական և տեղական գիտաժողովներում:

Աշխատությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Գրիտոնյա Արևելքի բաժնում և նույն ինստիտուտի գիտական խորհրդում: Ատենախոսությունում տեղ գտած թեզերը, որոնք ժամանակին արժարժի են հեղինակի մեկնադրությունում և հրատարակումներում, գրական գնահատական են ստացել գիտական հանդեսներում տպագրված գրախոսություններում («Լրաբեր» (Հաս. գիտ.), 1981, թ. 4, Revue des Etudes arméniennes, t. XVI, Paris, 1982, «Հայկագիտական լադրատման հանդես», հ. Ժ, Պեյրուի, 1984, "Мравалтави", т. XI, Тбилиси, 1985)

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, աղբյուրների և գրականության տեսությունից, երկու բաժիններից, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից: Յուրաքանչյուր բաժին կազմված է ներածական «Ընդհանուր գիտարկումներ»-ից և առանձին գլուխներից:

**ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Առաջաբանում հիմնավորվում են քննարկվող խնդիրների կարևորությունը և արդիականությունը, բնութագրվում է աշխատության մեթոդական հիմքը, բացորոշվում են անելիքները:

Աղբյուրների և գրականության տեսություն մեջ արժեքավորվում են սկզբնաղբյուրների հիմնական խմբերը (պատմագրական երկեր, վիճակագրական արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ) և հետազոտվող խնդիրների պարզաբանմանը դրանց բերած նպաստը: Նշելով ատենախոսությունում քննության առնված բոլոր էական խնդիրների տեսանկյունից ԺԲ-ԺԳ դարերի Հայ (ինչպես նաև՝ վրացական, ասորական, արաբական, պարսկական) պատմագրության վիթխարի աղծքը, այնուամենայնիվ շեշտվում է, որ ավատատիրական ավագանու սոցիալական պատմության վերաբերյալ ամենալիարժեք նյութը պարունակում են վիճակական արձանագրությունները: Անգամ խոշոր արժեքներ կայացնող ձեռագրերի հիշատակարանները, որոնք երբեմն լրակատար պատկերացում են տալիս ավատատիրական ընտանիքների կազմի, ներտոհմային և միջտոհմային առնչությունների մասին, չեն կարող համեմատվել իրավական փաստաթղթի կարգավիճակ ունեցող արձանագրությունների հետ:

ԺԲ դարի-ԺԴ դարի առաջին կեսի տարածաշրջանի քաղաքական պատմության համատեքստում Հայ ավատատիրական տների կազմավորման ու գործունեության պատմության լուսաբանումը շուրջ երկդարյա պատմություն ունի: Ատենախոսությունում տրված է Հայ և օտար ուսումնասիրողների փաստակի հանդամանակի վերլուծությունը, պարբերացվում է աշխատությունում քննության նույն դարձած խնդիրների հետազոտության պատմությունը, բնութագրվում են ժամանակակից պատմագիտության ձեռքբերումները:

Աշխատության առաջին բաժինը («Ռազմաքաղաքական տեղաշարժերը մերձավորարևելյան տարածաշրջանում ԺԲ դարում-ԺԴ

դարի առաջին կեսում և Հայաստանը» սկսվում է հիշյալ հարյուրամյակների ընթացքում Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի բնութագրումով («Ընդհանուր դիտարկումներ»)։ Ընդգծվում է այն սկզբունքային հանգամանքը, որ միջնադարյան իրականության մեջ առաջին անգամ կենտրոնական և Միջին Ասիայից դեպի արևմուտք ընթացող քոչվորական ժողովուրդները նախընտրեցին Իրանով և Այսրկովկասով անցնող ուղին, անվերականգնելի կորուստներ պատճառելով տեղական քաղաքակրթություններին։ Եթե մինչև ՃԱ դար քոչվորները դեպի արևմուտք էին արշավում Հյուսիսային Կովկասով և Սև ու Ադրյի ծովերից հյուսիս ընկած տափաստաններով, ապա թյուրք-սելջուկները և նրանց մոտիկ ու հեռավոր ազգակիցները գերադասեցին զանգվածային տեղաշարժերի հարավային ուղին, որից մեծապես տուժեցին Մերձավոր Արևելքի երկրները։ Քոչվորների նոր ալիքի կարևոր հատկանշական կողմն այն էր, որ թյուրք-սելջուկների, մոնղոլ-թաթարների և ապա Լենկթեմուրի առաջնորդած թյուրքական զանգվածի առաջընթացը դեպի արևմուտք փաստորեն չընդմիջվող, հետզհետև ուժեղացող և անվերջանալի գործընթաց էր։ Հետևաբար, մերձավորարևելյան քաղաքակրթության ոլորտի մեջ եկվորների ներառումը հանդիպում էր աստիճանաբար սաստկացող դժվարությունների, հետզհետե սպառվում էր իրանական, կովկասյան, բյուզանդական քաղաքական-մշակութային աշխարհների ներուժը։ Հատկապես ծանր հետևանքներ ունեցավ հզոր և միասնական իրանական պետություն քաղաքակրթությունը, որը կարող էր պատնեշի դեր ստանձնել Միջին Ասիայից դեպի Կովկաս և Փոքր Ասիա տանող ճանապարհին։ Եթե Արևմտյան Եվրոպայի ներդաշնակ զարգացումը ՃԱ դարից հետո այլևս չընդհատվեց արտաքին ուժերի միջամտություններով, ապա առաջավորասիական քաղաքակրթությունների դրժբախտությունն այն էր, որ քոչվորների ամեն մի նոր ներխուժում տեղի էր ունենում այնպիսի սեղծ ժամկետում և համեմատաբար նվազ դժվարություններով։ Օրինակ, մոնղոլ-թաթարներն շատ ավելի արագ կտրեցին կենտրոնական-Փոքր Ասիա ուղին, քան այդ հաջողվել էր թյուրք-սելջուկներին։ Հետևաբար, ամբողջ տարածաշրջանում և մասնավորապես Հայաստանում զնայով սակավանում էին հարաբերական կայունության ժամանակաշրջանները, նվազում էր դրանց տեղությունը։

Առանձնահատուկ ուշադրություն է գրավում քոչվորների արշավանքների և տարաբնակեցման ուղղությունների վերլուծությունը։ Սկսած 1064 թ., Ատրպատականով, Մուղանի դաշտով ու Կուրի հովտով իրականացվող արշավանքներն ու թյուրքական ցեղերի ներթափանցումները դարձել էին սովորական երևույթ։ Ավելին, նրանք հիմնավորապես հաստատվեցին Կովկասում և տեղական պայմաններին հարմարեցրեցին իրենց տնտեսաձևը։ Կուրի և Արաքսի ստորին հոսանքների գոտին դարձավ նրանց ձմեռային արտոստայրերի հիմնական շրջանը, իսկ Հայաստանի լեռնային ծարղագետիները ծառայում էին որպես ամառային արտոստայրեր։ Աստիճանաբար ստեղծվեց այնպիսի իրավիճակ, երբ թյուրքական տարրերը միջնադարյան Իրանի և Հայաստանի միջև, իրարից հեռացնելով դարավոր հարևաններին։ Հարավ-արևելքում գտնվող հայ-իրանական սահմանային գոտին վերածվեց մշտապես բաց դարպասի, որտեղից թյուրքական զանգվածի ներհոսքը այլևս կանգ չառավ։ Մյուս կողմից, թյուրքերի առաջընթացը չղաղարեց հայ-

ազգանական, հայ-վրացական և աղվանա-վրացական վաղեմի սահմանադեբում։ Առանձին դեպքերում թյուրքերը սեպի նման խրվեցին Կուրից հարավ ընկած հայկական երկրամասերում։ Թյուրքերի առաջընթացը շարունակվեց նաև հյուսիս-արևմտյան, ինչպես նաև հյուսիս-արևելյան ուղղություններով։ Հաստատվելով Կուրի միջին հոսանքի և նրա աջակողմյան վտակների շրջանում՝ թյուրքական ցեղերն արմատներ ձգեցին հայ-վրացական հինավուրց աղբյուրների գոտում՝ Գուգարքում։ Այսպիսով, մշտական սպառնալիք առաջացավ Հայաստանի հարավ-արևելյան, հյուսիս-արևելյան և նույնիսկ հյուսիսային սահմաններում։ Եթե նկատի առնենք, որ Հայաստանի արևմտյան մասին արդեն տիրացել էին թյուրք-սելջուկները, իսկ եկվորների մի հոծ խումբ էլ տարածվել էր Հայաստանի հարավային նահանգներում, ապա լրոջին պարզ կառուցա կատարվածի աշխարհաքաղաքական ողջ նշանակությունը։ Հայաստանը փաստորեն վերածվել էր կղզու, որը շրջապատված էր այնպիսի օտար էթնիկական խմբերով, որոնք հակադրվում էին տեղացիներին իրենց տնտեսություններով, մշակույթով և կրոնով։

Հայաստանի պատմության նախորդ ողջ ընթացքը վկայում է, որ երկիրը գրեթե մշտապես գտնվել է երկու կայսրությունների հակամարտությունների ոլորտում։ Իրողություն, որը զգալի չափով բացատրվում է Կովկասի՝ Ասիան և Եվրոպան միմյանց կապող օղակ լինելու, Հայաստանի Առաջավոր Ասիայի խիստ կարևոր գոտում գտնվելու հանգամանքով։ Երկրի համար հատկապես բնութագրական երկբևեռ աշխարհաքաղաքական միջավայրը օգնել էր մշակելու՝ իրազրությունը հարմարիչու, ներքին ինքնավարությունը պահպանելու ու հարմար պահերին ընդարձակելու կառուցակարգեր։ Սկզբունքորեն տարբեր իրավիճակ էր ստեղծվում, երբ Հայաստանը բռնություններ մտցվում էր ժամանակաշրջանի միակ աշխարհակայությունը կազմի մեջ։ Նախ երկիրը այլևս չէր գոյություն ուրախ ռազմավարական նշանակություն ունեցող տարածք։ Հայ բնակչությունը սիրաշահելու քաղաքականությունը փոխարինվում էր կայսրության կազմի մեջ տարալուծելու և այն մեկընդմիջտ կլանելու ձգտումով։ Այդպիսի միտումները խորթ չէին նաև երկբևեռ աշխարհաքաղաքական իրազրությունը, բայց ՃԱ-ՃԻ դարերում ավելի սցոուն էին դրսևորվում։ Պակաս կարևոր չէ այն փաստը, որ նշված պատմաշրջանում Հայաստանն անընդհատ էր գտնվում միաբևեռ աշխարհաքաղաքական միջավայրում։ Պատմաշրջանի աշխարհաքաղաքական կացության երկրորդ բնութագրական գիծն այն էր, որ Հայաստանը գերազանցապես բախվում էր քոչվորական ժողովուրդների ստեղծած կայսրությունների հետ։ Ի տարբերություն դարավոր պետական-քաղաքական ավանդույթներ ունեցող Բյուզանդիայի, քոչվորական ժողովուրդների կայսրությունները երիտասարդ տերություններ էին, որոնք ստեղծվել էին կայծակնային արագությամբ, տարացեղ զանգվածների բուռն տեղաշարժերի ու ներթափանցումների հետևանքով և վազանցուկ էին։ Կենտրոնական իշխանությունների դիրքերը այդ պետություններում խախտւում էին և փուլ էին դալիս նույնիսկ ներքաղաքական ցնցումների և դահակալական կռիվների հետևանքով։ Հայաստանի համար առավել մեծ վտանգ էին ներկայացնում ոչ թե քոչվորների ստեղծած միասնական տերությունները, այլ նորաստեղծ կայսրությունների փուլզուժն ու դրան հաջորդած քաղաքական քառույթը։ «Սև սելջուկների» սուլթանության և իլխանության արուհուսից հետո

Հայաստանում և Հարակից շրջաններում առաջացած պետական կազմավորումների միջև ծավալված պայքարն էր, որ մեծապես վնասեց Հայ պետականությունից վերածնման գործին:

ԺԴ դարի երկրորդ կեսում վրա հասած Հայոց պետականության դադար ընդհատումը քննության է արժանի նաև Հայաստանի ներքին զարգացման տեսանկյունից: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի ոչ ներքին քաղաքական և ոչ էլ տնտեսական զարգացումը նախադրյալներ չէին ստեղծում միասնական և կենտրոնացված պետության կազմավորման համար, ընդ որում դրա նախանշանները նկատելի էին անգամ մինչև քոչվորների Հայտնվելը: Երբ Արաստանն ու Բյուզանդիան ԺԱ դարի առաջին քառորդում ընթանում էին քաղաքական համախմբման և տարածքային ընդարձակման ուղիով, Հայաստանում բարձրակետին էր հասել ապակենտրոնացման և քաղաքական մասնատվածության գործընթացը: Խոչոր պետական կազմավորման ստեղծման միտում չէր քսելուրվեց նաև ԺԲ դարի վերջում-ԺԳ դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում, երբ Զաքարյանների գլխավորությամբ ազատագրվեցին Շիրակի Բագրատունիների, Սյունիքի, Տաշիր-Ջորագետի թագավորությունները, Վանանդի թագավորության մի մասը, մի շարք իշխանություններ: Երկիրը չարունակում էր ընթանալ նորանոր իշխանությունների տրոհվելու ուղիով նաև հետագայում, ԺԳ-ԺԴ դարերում, մասնավաճ որ զարգացման այդ ուղղությունը հետևողականորեն իրախոսվում էր մտնողների կողմից: Չպետք է անտեսել նաև տնտեսական գործոնների դերը: Քոչվորների գնալվածի ամեն մի նոր ներխուժում և տիրապետություն ամբի էր սահմանափակում Հայաստանի քաղաքական վերածննդի հնարավորությունները: Աշխարհաքաղաքական կացության շարունակ վատթարացումն ու Հայաստանի ներքին զարգացման ընթացքն էլ, գարհուրելիորեն զուգակցվելով, Հանդեպներին հիշափի ողբերգական հետևանքների:

Տարածաշրջանի հարստությունն ու զարգացող քաղաքական իրադրության վերուժումն ու Հայոց պետականության ճակատագրի վերհանմանն են հատկացված առաջին բաժնի հաջորդ չորս գլուխները:

Առաջին գլուխը՝ «Ռազմաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում և հայկական պետական կազմավորումները ԺԲ դարի սկզբում-80-ական թվականներին առաջին կեսում», սկսվում է Մերձավոր Արևելքի քաղաքական կացության հակիրճ բնութագրմամբ: Ընդ որում, ընդգծվում է այն պարագան, որ ԺԲ դարի իրադրությունը մեծապես պայմանավորված էր նախորդ Հարյուրամյակի վերջին քառորդում ծավալված և տարածաշրջանի համար շրջադարձային նշանակություն ունեցող անցուղարձեքով: Իրանցից առաջինը սելջուկ-թյուրքերի աշխարհակալության անկումն էր, նրա կազմից որոշ սուլթանությունների առանձնացումը: Զանազան պետական կազմավորումների միջև Մերձավոր Արևելքում ընթացող պայքարի հետագա ընթացքը զգալի չափով թերադրված էր ԺԱ դարի վերջում սկզբնավորված խաչակրաց շարժումով և Լեանտի խաչակրաց պետությունների առաջացումով: Խաչակրաց շարժման դեմ պայքարը նշանակալի ուժեր էր խլում մահմեդական աշխարհից ու, առաջին հերթին, սելջուկ-թյուրքերից, գյուրացնելով Արևելքի քրիստոնեական պետությունների խնդիրը: Լատինական Արևելքի խաչակրաց պետությունների վիճակը ծանրացավ ԺԲ դարի 80-ական թթ. երկրորդ կեսում, երբ մահմեդականները

գրավեցին Երուսաղեմը, իսկ խաչակրաց երրորդ արշավանքը (1189-1192) ի գորու չեղավ ամրապնդելու խաչակիրների դիրքերը Արևելքում: Բյուզանդիայի աղետալի պարտությունը Մանագլիքոսի մոտ 1071 թ. ծայրաստիճան լարված վիճակ առաջ բերեց Հարավային Հայաստանում, որտեղ նախկինում առանձնապես ամուր էին կայսրության դիրքերը: ԺԲ դարում կայսրությունը այլևս ի վիճակի չէր օգնություն ցույց տալու իր երբեմնի ստորականներին, որոնք ավանդույթի համաձայն պաշտպանում էին Բյուզանդիայի արևելյան սահմանները:

Հարավային Հայաստանի քաղաքական կազմավորումներից, որոնք գոյատևում էին սելջուկյան արշավանքներից հետո, առաջինը պատմական ասպարեզից հեռացավ Տարսնի Մամիկոնյանների իշխանությունը: Նրա տիրակալներից Չորսվանները հետմանակերտյան տարիներին, հավանաբար, դադարել էր Բյուզանդիայի ստորական լինելուց: Նրա որդի Ապրասաթի գործունեությունը ԺԲ դարի սկզբում ծավալվում էր Տարսնից հստու: 1112 թ. նա գահակց թյուրք-սելջուկների դեմ մարտերից մեկում, Լեոն Ա Ռուբինյանի իշխանության տարածքում: Հայ իշխանական տները մեծ դժվարությամբ էին դիմադրվում սելջուկյան արհավիրքները անգամ երկրի հարավ-արևմտյան այն գավառներում, որոնք ամրացվել էին դեռևս արաբա-բյուզանդական հակամարտության ժամանակաշրջանում: Այդ գավառները նաև մտնում էին Հայ քաղաքականության ծախքի հոծ բնակության գոտու մեջ, որը բյուզանդացիները հետևողական քաղաքականությամբ ջանում էին դարձնել իրենց արևելյան պատվարը: Չորրորդ Հայքի գավառներից Դեգիբուն ԺԲ դարում դեռևս իշխում էր Կամենյասայանների կամ Կեկավանների ընտանիքը: Ընդհուպ մինչև ԺԲ դարի 70-ական թթ. այդ տոհմը պահպանել էր վերահսկողությունը գավառի գոնե մի մասի նկատմամբ Սղուկ կենտրոնով: Բայց ԺԲ դարի վերջում, երբ նույնիսկ մահմեդական իշխանությունները կոչ գնացին էյուբյաններին և Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Կամենյասայանների հետագա գոյատևումը, թերևս, անհնարին էր դարձնում:

Կացությունը նույնքան ծանր էր Վասպուրականում և Սասունում, որտեղ ևս Հայ ավատատերերը մահու ու կենաց պայքար էին մղում իրենց դիրքերը պահպանելու նպատակով: Ամյուկ ամրոցի շրջակայքում և Աղթամար կղզում ԺԱ դարում իշխում էին Խեղենեկյանները, որոնք, հավանաբար, Արծրունիների Վասպուրականում մնացած տոհմաճյուղից էին սերում: Այդ իշխանությունը ևս ի վիճակի չեղավ իտևապիել շրջակա Հայ և օտար այն քաղաքական կազմավորումների ճակատագրից, որոնք ԺԲ դարի երկրորդ կեսում ենթարկվում էին Շահ-Արմենների ամիրայության ճնշմանը: Հավանաբար ԺԲ դարի 70-ական թթ. Խեղենեկյանները կորցրեցին Ամյուկը, բայց նրանց ժառանգորդները՝ Խեղենեկյան-Սեֆեդլիյանները պահպանեցին իրենց պատվար Աղթամարը նաև հաջորդ դարերի ընթացքում:

ԺԲ դարի 30-ական թթ. մինչև 1176 թ. Սասունում իշխում էր Վիգեն Թունիկյանը, որը սերտ կապեր էր հաստատել Հարավային Հայաստանի իշխանական տների վերջին ժառանգների հետ: Շահ-Արմեն Սուբան Բ-ի (1128-1185) դեմ պայքարը Վիգենի իշխանության վերջին տարիներին այնպիսի օրհասական բնույթ էր ընդունել, որ Վիգենը Հարկադրված էր նույնիսկ հավատուրաց դառնալ: Նրա թոռներից Շահնահը, հավանաբար, կախվածություն մեջ էր գտնվում Շահ-Ար-

մենից և կառավարում էր Սասունը որպես կիսաանկախ տիրակալ: Թու-  
նիկյանները որոշակի իրավունքներ էին պահպանել Սասունի նկատ-  
մամբ թերևս մինչև 1185/1186 թ., երբ տեղի ունեցավ Սասունի Հայ-  
կական իշխանության փերջնական անկումը և անցումը Շահ-Արմեն-  
ներին: Այսպիսով, 1185/1186 թ. շրջադարձային էր Հարավային Հայաս-  
տանի պատմության մեջ այն առումով, որ ավարտին հասավ այդ հի-  
նավուրդ Հայկական տարածքում բնիկ տիրողների հիմնական մասին  
իշխանությունից գրկելու գործընթացը:

Իրավունքները բավականաչափ ծանր էր նաև Հյուսիս-արևե-  
լյան Հայաստանում, որտեղ միայն Սյունիքի և Տաշիր-Ձորագետի թա-  
գավորություններին հաջողվեց դիմադրավել սելջուկյան արհավիրքնե-  
րը:

Սյունիքը կարողացավ իր շահերին ծառայեցնել մահմեդական ամի-  
րալությունների նկատմամբ սելջուկյան սուլթանության կենտրոնական  
իշխանությունների քաղաքականության փոփոխությունը, որը տեղի  
ունեցավ Հեռավոր արևմտյան ժամանակաշրջանում: Օգտվելով «Մեծ  
սելջուկների» սուլթանության և Գանձակի Շեղադղյան ամիրալության  
միջև հարաբերությունների սրումից, Սյունիքի իշխանները թշնամուց  
ազատագրեցին թագավորության որոշ տարածքներ: Շեղադղյանների  
արտաքսումից հետո, երբ ստեղծվեց Գանձակի սելջուկյան կուսակալու-  
թյունը, Սյունիքի արտաքին քաղաքական դրությունը զգալիորեն  
բարդացավ և ուղղակի սպառնալից դարձավ Մելիքշահ սուլթանի  
(1072-1092) մահվանը հաջորդած անկայունության պայմաններում:  
ԺԲ դարի սկզբում թյուրքերը ասպատակեցին Սյունիքը և կողպատեցին  
նրա մայրաքաղաք Կապանը, իսկ այնուհետև գրավեցին որոշ բերդեր:  
Սյունյաց թագավորության դեմ թյուրքերի հետագա արշավանքները  
Անիի համար ընթացող պայքարի արձագանքներն էին, որի ընթացքում  
Սյունիքը նորանոր տարածքներ էր կորցնում: Սյունիքը բուն Հայաս-  
տանում միակ անկյունն էր, որտեղ մինչև ժԲ դարի 70-ական թթ., թե-  
կուզև աննշան տարածքում, պահպանվել էր Հայկական թագավորա-  
կան իշխանությունը:

ԺԲ դարի սկզբում չափազանց դժվարին պայմաններում հայտնվեց  
Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորությունը: Կյուրիկե Բ-ի որդի-  
ներ Դավիթն ու Աբասը ստիպված էին ետ մղել ինչպես թյուրք-սել-  
ջուկների, այնպես էլ Վրաստանի թագավոր Դավիթ Դ Շինողի (1089-  
1125) օրավուր ուժեղացող հարձակումները: ԺԲ դարի երկրորդ քառոր-  
դում Կյուրիկյանները արդեն կորցրել էին թագավորությունը, և նրանց  
սերունդները իշխում էին Տավուշ (մինչև 1145 թ.), Մաճնաբերդ և  
Նոր-բերդ ամրոցներում ու հարակից տարածքներում, հարատևելով  
մինչև ԺԳ դարի կեսերը:

Գոյատևման համար ԺԲ դարում ծանր պայքար էին մղում Արցախի  
հայկական իշխանությունները՝ համատրեին պահպանելով իրենց ան-  
կախությունը:

Տարածաշրջանի քաղաքական կյանքում ամբողջ ԺԲ դարի ընթաց-  
քում նկատելի դեր էին խաղում Հայաստանում և հարակից շրջաննե-  
րում ստեղծված մահմեդական ամիրալությունները: Այդ պետական  
կազմավորումներն առաջացել էին «Մեծ սելջուկների» սուլթանության  
փլուզումից հետո, գլխավորապես այն ամիրաների ջանքերով, որոնք  
բարձր դիրքի էին հասել կենտրոնական իշխանության թուլացման ժա-

մանակաշրջանում: Այսպես, արքայազների խնամակալները՝ աթաբեկ-  
ները, աստիճանաբար անկախանալով, իրենք էին նպաստում պետու-  
թյան քայքայմանը: Այս տեսակետից բնութագրական է Գանձակի ա-  
թաբեկության օրինակը, որը Հայաստանի ազատագրման գլխավոր հա-  
կառակորդն էր ԺԲ դարի կեսերին: 1148/1149 թ. Գանձակին տիրեց և իր  
տահմի իշխանության հիմքերը դրեց ծաղուժով զփչաղ Շամս ադ-Դին  
Եյսուկը, որին հաջողվեց 1161 թ. գահ բարձրացնել իր սանին՝ սուլ-  
թան Աբսյանին (1161-1176): Իր գերիշխանությունը ենթարկելով վերջի-  
նիս՝ Եյսուկը մինչև իր մահը (1175/1176 թ.) փաստորեն ինքն էր կա-  
ռավարում Իրաքի սելջուկյան սուլթանությունը: Երկրորդ ամենահզոր  
մահմեդական իշխանությունը, թերևս, Հայաստանի հարավում առա-  
ջացած Շահ-Արմենների ամիրալությունն էր, իսկ թե կենտրոնում: Նրա  
սահմանների մեջ էին մտնում Արձեշ, Մուշ, Մանազկերտ քաղաքները՝  
իրենց շրջակա տարածքներով: Արևմուտքում, Սուլթան Բ-ի օրոք, ամ-  
իրալությունը վերահսկողություն էր հաստատել Դիարբեքիլի նկատ-  
մամբ, իսկ հյուսիս-արևմուտքում նրա սահմանների մեջ էր մտնում,  
համարաբար, Ուխտիք (Օլթի): ԺԱ-ԺԲ դարերում մահմեդական փոքր  
իշխանություններ էին ստեղծվել նաև Հայաստանի քաղաքներում՝ Ա-  
նիում, Դվինում, Կարսում, Կարինում, Սուրմարիում և շրջակա գա-  
վառներում, որոնք համեստ հզորություն ունեին, բայց դարձյալ զգա-  
լիորեն խոչընդոտում էին Հայաստանի ազատագրմանը:

ԺԲ դարի սկզբում Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում սկ-  
սեց կարևոր դեր խաղալ նաև աննախադեպ հզորության հասած Վրա-  
ցական թագավորությունը: Դարի առաջին քառորդի վերջում այն դար-  
ձավ Մերձավոր Արևելքի ամենաազդեցիկ պետություններից մեկը, իր  
սահմանների մեջ ընդգրկելով գրեթե ողջ Այսրկովկասը: Հարձակողա-  
կան քաղաքականություն վարելով Հայաստանում՝ վրացական գործե-  
րը 1124 թ. հաստատվեցին Հյուսիս-արևելյան Հայաստանի մի շարք  
բերդերում և առաջին անգամ գրավեցին Անին: Վրաստանի հետագա  
առաջնադարյան կասեցումը Հայաստանում պայմանավորված էր ոչ  
միայն ամիրալությունների համառ դիմադրությամբ, այլև վրացական  
թագավորությունում մշտապես բորբոքվող ներդասակարգային պայ-  
քարով: Միայն ԺԲ դարի վերջում վրացական արքունիքը մշակեց նոր  
քաղաքական կուրս, որն արտահայտում էր փաստորեն իր կամքը թե-  
լադրող ավատատիրական ավագանու շահերը: Հայկական երկրամասե-  
րի հետագա ճակատագրի առումով կարևոր հանգամանք էր նաև Ար-  
ևելյան Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի իշխանների քաղաքա-  
կան դերի աճը Վրացական թագավորության ներքին կյանքում: Այդ  
միտումը, որ իրեն զգացնել էր տալիս Դավիթ Շինողի ժամանակներից ի  
վեր, ակներև դարձավ ԺԲ դարի վերջում և ավելի ուժեղացավ հաջորդ  
տասնամյակների ընթացքում:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ԺԲ դարի սկզբում-80-ական  
թթ. առաջին կեսում Մերձավոր Արևելքում ծավալված ռազմաքաղա-  
քական անցուղարձեքը վերընթաց գարգացման որոշակի հնարավորու-  
թյուն ընձեռեցին միայն Հյուսիսային Հայաստանի որոշ շրջանների:  
Միաժամանակ Վրացական թագավորության մեջ ընդգրկված Հայկա-  
կան տարածքներում հանդես եկան նոր ուժեր՝ ի դեմս Զքարյանների  
և Մահկանաբերդցիների (Մազունյանների) ու նրանց շուրջը հա-  
մարմբված հայ իշխանական տները: Այդ նոր ուժերին էլ վիճակված էր

ուղղութիւն տալ հայկական տարածքների պատմական զարգացման հետագա ընթացքին հաջորդ տասնամյակների ընթացքում:

Այդ առումով առավել մեծական՝ 1186-1225 թթ. ժամանակահատվածի քննությունն է նվիրված երկրորդ գլուխը («Կացորթունը ԺԲ դարի վերջում-ԺԳ դարի սկզբում (1186-1225 թվականներ) և հայ ավատատիրական տների վերածննդի նախադրյալները»): Այդ տարիների ընթացքում Մերձավոր Արևելքում տեղի ունեցած նշանակալի ռազմաքաղաքական տեղաշարժերը, ինչպես նաև Վրացական թագավորությունում իրականացված ներքաղաքական փոփոխությունները նպաստավոր նախադրյալներ ստեղծեցին հայկական երկրամասերի ազատագրման և հայ ավատատերերի դերքերի ամրապնդման համար: Մահմեդական քաղաքական կազմավորումների մի մասի թուլացումը և ազատագրված տարածքները ժառանգական տիրակալություն պայմանով ստանալու հեռանկարը բավարար հիմքեր էին Ժ դարի վերջի-ԺԱ դարի սկզբի բոլոր հայկական թագավորությունները Ջաքարյանների իշխանությունների կենտրոնացնելու, իսկ հետագայում նաև միավորելու և Հայաստանի անկախությունը վերականգնելու համար: Այդ կարևորագույն խնդիրը մինչև մոնղոլական արշավանքները չլուծվեց, իսկ այնուհետև ընդհանրապես դարձավ անհնարին: Ուստի սեեռուև ուշադրության է արժանի այն արտաքին քաղաքական անգամանքների և ներքին գործոնների լուսաբանումը, որոնց պայմաններում տեղի ունեցավ հայկական երկրամասերի ազատագրումը: Անհրաժեշտ է ճշգրիտ գնահատական տալ այլևայլ տարածքների ազատագրման ընթացքին և հեռանկարներին, որը և հնարավորություն կընձեռի հիմնավոր եզրակացությունների հանգելու Ջաքարյանների և նրանց ստորականների գործունեության մասին: Ջաքարյանների ղեկավարած ազատագրական պայքարը ժամանակագրական և տարածքային առումներով հետազոտելիս մշտապես պետք է նկատի ունենալ նաև մահմեդական քաղաքական կազմավորումների ուժերի հարաբերակցություն մեջ տեղի ունեցող փոփոխությունները, այդ ամիրայությունների ներսում ընթացող ուշադրավ սոցիալ-քաղաքական անցումները: Երբքաղաքական փոփոխությունները, սոցիալական տեղաշարժերը իրենց ցայտունորեն զգացնել տվեցին Եյսկուզյանների և Շահ-Արմենների տիրապետությանը ենթակա երկրամասերում: Որոշակի ծավալ և խորություն ձեռք բերած ավատատիրականացման գործընթացի հետևանքով զգալիորեն թուլացավ Գանձակի Եյսկուզյան ավաբեկությունը: Եյսկուզ ավաբեկի թուռներ մինչև ծավալված երկարատև կռիվները նվազեցրին այն դերը, որ խաղում էին Եյսկուզյանները Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում: Այսպիսով զգալիորեն դյուրացվեց Հայաստանի կենտրոնական շրջանների, Սյունիքի, Ուտիքի, Արցախի ազատագրության գործը:

ԺԲ դարի 80-ական թթ. կեսերից կարևոր իրադարձություններ ծավալվեցին նաև Շահ-Արմենների ամիրայությունում: Սուբան Բ-ի մահից հետո, նրա մամուլքներից Բեկթամուրը կարողացավ հաղթահարել ամիրայությունում սկիզբ առած քառսը և նույնիսկ ընդարձակեց պետության սահմանները՝ նրան կցելով Վանա լճից հարավ և արևելք ընկած երկրամասերը: Բեկթամուրը իշխեց իշխելով մինչև 1193 թ., իսկ նրա սպանությունից հետո հանաբախի դարձան իշխանության բռնի գրավումները ու Շահ-Արմենների պետությունը գլխապետույտ արա-

զությունը ի կործանում գնաց: Օգտվելով ամիրայությունում հաստատված անկայուն դրությունից, 1207 թ. էյուբյանները գրավեցին և իրենց հսկայածավալ տիրությունների կազմի մեջ մտցրեցին Շահ-Արմենների պետությունը: Հետևաբար, Հայաստանի հարավային շրջանները օտարների լծից ազատագրելու գործը ԺԲ դարի սկզբին նշանակալիորեն բարդացավ:

Եթե Հարավային Հայաստանում ամրապնդվեցին էյուբյանները, ապա երկրի հյուսիս-արևմուտքում ծավալապաշտական հավանություններով հանդես եկան Իկոնիայի սուլթանները: Չնայած 1202 թ. Բասենի ճակատամարտում կրած պարտությանը, Իկոնիայի սուլթանությունը շարունակում էր մնալ Վրաստանի ամենահզոր ախոյանը Փոքր Ասիայում: Իկոնիայի սուլթանությունը առանձնակի հզորության հասավ Այա աղ-Դին Բեյ-Կուբադ Ա-ի (1219-1237) օրոք, որի նախածնունդով վերակազմվեց սելջուկների առաջնաղագուծը դեպի Հյուսիս-արևմտյան Հայաստան:

ԺԲ դարի վերջի-ԺԳ դարի սկզբի Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքի ուշադրավ կողմերից մեկը մահմեդական փոքր ամիրայությունների կուլ գնայն էր անհամեմատ խոշոր պետական կազմավորումներին: Այդ գործընթացը բացասաբար անդրադարձավ հայկական երկրամասերի ազատագրման ընթացքի վրա, հայ-վրացական գործերին դուրս բերելով այնպիսի հզոր ուժերի դեմ, ինչպիսիք էին էյուբյանների ստեղծությունը և Իկոնիայի սուլթանությունը:

Ընդհանուր առմամբ գնահատելով ռազմաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում ԺԲ դարի 80-ական թթ. կեսերից մինչև ԺԳ դարի 20-ական թթ. երկրորդ կեսն ընկած քառամյակում, կարելի է եզրակացնել, որ այն խիստ բարդ ու Հարափոփոխ ժամանակաշրջան էր: «Մեծ սելջուկների» տերության փլուտակների վրա գոյացած ամենատարբեր չափերի և հզորության քաղաքական կազմավորումներն ապրում էին մի կողմից ներքին խմորումների ու դժվարությունների, մյուս կողմից էլ՝ վերախմբավորման և ավելի խոշոր պետական միավորումների մեջ համախմբվելու ժամանակաշրջան: Բանի դեմ այդ գործընթացները չէին ավարտվել՝ Վրաստանի և Հյուսիս-արևելյան Հայաստանի համար արտաքին քաղաքական իրադրությունը բարենպաստ էր և ավելի շատ հարձակողական, քան պաշտպանական քաղաքականություն վարելու հնարավորություն էր ընձեռում: Այսպես, ԺԲ դարի 90-ական թթ. Անիի Երզրայանների թուլացումը, միաժամանակ Եյսկուզյանների ու Շահ-Արմենների արտաքին քաղաքական դժվարություններն ու ներքին պայքարը՝ նախադրյալներ ստեղծեցին Բաղրատունյաց մայրաքաղաքի և Արաբաժտունի ազատագրման համար: ԺԳ դարի սկզբից մինչև 1225 թ., Եյսկուզյանների ավաբեկության վերացումն ընկած ժամանակաշրջանում, Ջաքարյանները հաստատվեցին Հայաստանի կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջաններում՝ Դիլինում, Սյունիքում, Արցախում: Փոխարենը՝ էյուբյանների իշխանի տիրելուց հետո Ջաքարյաններին չհաջողվեց հիմնավորվել Արաքսից հարավ գտնվող հայկական գավառներում: ԺԳ դարի սկզբում՝ Կարսի գրավումից հետո, երբ տեղի ունեցավ Իկոնիայի սուլթանությունից հարավ, կայուն սահմանագիծ առաջացավ նաև Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Հետևաբար, ԺԲ դարի վերջում-ԺԳ դարի սկզբում Ջաքարյանները իրական հնարավորություններ ունեին



Հայաստանի միայն Հյուսիսային, Կենտրոնական և Հյուսիս-արևելյան շրջանների ազատագրման համար:

Ժամանակագրական առումով խիստ կարճատև, սակայն և պատմական զարգացման միտումների առումով հատկանշական փուլի հետազոտությունը արված է երրորդ գլխում՝ «Խորեզմշահ Ջալալ աղ-Դինի արշավանքները և Հայաստանը»:

Վերջին խորեզմշահ Ջալալ աղ-Դինի (1220-1231) յոթնամյա պատերազմական գործողությունները Այսրկովկասում (1225-1231) նախադուռ դարձան տեղական զարգացած ավատատիրական հասարակությունների վրա քոչվոր ժողովուրդների երկարատև քաղաքական տիրապետության հաստատման՝ պայմանավորելով այսրկովկասյան ժողովուրդների սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացի ընդհատումն ու աստիճանական հետադիմությունը Հետագա դարերում: Խորեզմշահի արշավանքների պատմությունն անբարդունալը անհրաժեշտ է պարզարանելու համար ներքին կացությունը Հայաստանում՝ մոնղոլական վերահաս աղետի նախօրյակին: Լուսաբանելով այն պատճառները, որ հնարավորություն տվեցին Ջալալ աղ-Դինի անհամեմատ փոքրաթիվ, պարենավորման ու համալրման առումով անհավասար պայմաններում գտնվող գործերին հաղթող դուրս գալու վճռական ճակատամարտերում, տարիներ շարունակ գրեթե անպատիվ ավերել ու կողոպտել ամենահեռավոր շրջանները, կարելի է բացահայտել և մոնղոլական նվաճումների նախահիմքերը:

Հայտնի է, որ մոնղոլական արշավանքների ծանրությունը առաջիններից մեկը կրեց Խորեզմշահերի պետությունը: Մինչ այդ ամբողջ Մերձավոր Արևելքում ամենահզոր իշխանավորներից մեկը համարվող Խորեզմշահ Մուհամեդի (1200-1220) բազմաթիվ որդիներից միայն Ջալալ աղ-Դինը ընդունակ գտնվեց դիմագրավելու մոնղոլներին, սակայն նա էլ չկարողացավ կասեցնել թշնամու հարձակումը և հարկադրված փախավ Հնդկաստան: Այստեղ նա կարճ ժամանակամիջոցում իր դեմ հանեց տեղական իշխողներին և ստիպված էր իր հետագա հույսերը կապել Իրանի, Պարսկական Իրաքի և Այսրկովկասի հետ: Այդ տարածքները դեռևս միայն թիթեկակրորեն էին ենթարկվել մոնղոլական ավերածություններին, հարուստ էին և բարեբեր, ունեին ռազմական կարողություն, սակայն միավորված չլինելով ի վիճակի չէին լրջորեն դիմագրավել խորեզմշահին: Ջալալ աղ-Դինը հույս ուներ նաև իր կողմը գրավել որոշ երկրամասերի մահմեդական բնակչությանը՝ ներկայացնելով իրեն իբրև իսլամի գինյոր ու մուսուլմանների պաշտպան ընդդեմ քրիստոնյաների ու մոնղոլների: Միայն նոր տարածքների գրավումը և մի դրոշի ներքո համախմբումը, մոնղոլների դեմ հզոր միավորման ստեղծումը կարող էին հույսեր ներշնչել խորեզմշահին, որ նա ուժ կունենա հաղթելու թշնամուն և վերադարձնելու իր կորցրած թագավորությունը:

Հայ-վրացական զորքերը փորձեցին կասեցնել թշնամու հարձակումը Գառնիում: Նրանց հաղթանակը կնշանակեր պարտության մատնել և արտաքսել խորեզմշահներին, իսկ Ջալալ աղ-Դինի հաջողությունը նրան թույլ կտար շարժվել ուղղակի Տիբիսիսի վրա: Հավանաբար 1225 թ. օգոստոսին տեղի ունեցած վճռական բախման ելքը որոշեցին հայ-վրացական բանակի ներքին անհամերաշխությունն ու տարաձայնությունները: Ի վանե Ջաքարյանի գլխավորած ուժերը զարմանալի թույլ դի-

մաղրություն ցույց տվեցին, և Ջալալ աղ-Դինը հաղթանակ տարավ Գառնիի մատույցներում: Այդ հաջողությունից հետո խորեզմշահը չչարունակեց առաջխաղացումը, այլ ավարտության նպատակով նախ գրավեց Դվինը, իսկ այնուհետև անսպասելիորեն վերադարձավ Թավրիզ լսելով, որ այնտեղ խոտովություն է պատրաստվում իր դեմ: Խորեզմշահը ավարտության նպատակով Հայաստանում և Վրաստանում թողեց իր ամիրաններին, որոնք երեք ամիս սպասուսկում էին այլևայլ երկրամասեր: 1225 թ. վերջում Ջալալ աղ-Դինը կրկին ներխուժեց Հայաստան, իսկ հաջորդ տարվա մարտին գրավեց Տիբիսը: Հայ-վրացական զորքերը պատասխան գործողությունների կարողացան դիմել միայն 1227-28 թթ., երբ խորեզմշահը շուրջ մեկ տարով բացակայում էր Այսրկովկասից: Ռուսուզան թագուհուն հաջողվեց նոր բանակ հավաքել և խորեզմշահին դեմ դուրս բերել միայն 1229 թ. գարնանը, Բոլնիսից ոչ հեռու գտնվող Մինգորի վայրում, բայց դարձյալ ապարդյուն: Կովի սկզբում Ջալալ աղ-Դինը իր կողմը գրավեց վրացական բանակի 20 հազարանոց դիչաղական շոկատը, որը հրաժարվեց մարտնչել խորեզմշահներին դեմ, իսկ մնացած զորքերը ի վիճակի չեղան հաղթանակի հասնելու: Խորեզմշահի վերջին հաջողությունը եղավ Նյաթի գրավումը, սակայն այդ ժամանակահատվածում ժայռաստիճան սրվեցին հակասությունները Ջալալ աղ-Դինի և, մյուս կողմից, Նյաթի և Իկոնիայի մահմեդական տիրակալների միջև: Վճռական ճակատամարտում, երգնկայի մոտ, խորեզմշահը ջախջախվեց և այնուհետև ստիպված էր հողալ սեփական անձի փրկության մասին, անվերջ խուսափելով մոնղոլական ղեկավարների հետապնդումներից: 1231 թ. նա Ամդի մոտակայքում սպանվեց տեղացի քրդերի ձեռքով, բայց նրա մահով Մերձավոր Արևելքում ամենևին էլ չվերականգնվեց նախկին վիճակը: Խորեզմշահի արշավանքները կարճ ժամանակամիջոցում զգալի տեղաշարժեր առաջ բերեցին նաև Այսրկովկասի քաղաքական իրադրության մեջ՝ ստեղծելով ուժերի նոր հարաբերակցություն արտաքին ասպարեզում: Այդ է պատճառը, որ ԺԳ դարի 30-ական թթ. Հայաստանի ազատագրության գործում միայն աննշան հաջողություններ ձեռք բերվեցին: Դժբախտաբար, հենց այդ պահին էլ հասավ առավել ծանր հարվածը: Իրադարձությունների հետագա ընթացքը կանխորոշեց 1236 թ. մոնղոլական արշավանքը, որը բացառիկ կարճ ժամանակամիջոցում արտասովոր հաջողություններ բերեց նվաճողներին: Կովկասյան քաղաքական և մշակութային աշխարհի համար արտաքին կացությունը կտրուկ կերպով վատթարացավ: Հայ ժողովրդի համար սկսվեց մաքսուումների և հանուն գոյատևման մղվող պայքարի երկարատև ժամանակաշրջան:

Չորրորդ գլուխ. «Իրավիճակը ԺԳ դարի 30-ական թվականներին երկրորդ կեսում - ԺԳ դարի առաջին կեսում և հայ ավատատիրական ընտանիքները»:

Մոնղոլների հայտնվելը Մերձավոր Արևելքում առանցքային տեղաշարժեր առաջ բերեց տարածաշրջանում: Ելնելով իրենց ռազմաքաղաքական նպատակներից՝ նվաճողները ոչ միայն սկզբնական շրջանում հիմնականում անխոփոխ թողեցին Հյուսիս-արևելյան Հայաստանի կառավարման համակարգը, այլև պահպանեցին հայ ավատատիրների այն ներքին կազմակերպությունը, որը ձևավորվել էր Ջաքարյանների օրոք: Դրաված երկրների նախկին տիրակալներին հանդուրժելու և սեփական նպատակների ծառայեցնելու

մոնղոլական ուղեգիրը շեշտակիրորեն տարբերվում էր թյուրք-սելջուկների որդեգրած գործելակերպից, որը բացառում էր հայ իշխողների ազդեցությունը նույնիսկ մասնակի պահպանում հետմանդկիրայան ժամանակաշրջանում: Հատկապես մոնղոլական տիրապետության սկզբնական փուլում՝ մինչև իսլամական շրջանում և առաջին իլիխանների օրոք, նվաճողների հետապնդած հեռահար նպատակները առանձին դեպքերում հնարավորություն էին ընձեռում հայ-մոնղոլական համագործակցության, իսկ Կիլիկյան Հայաստանի պարագայում՝ նաև դաշինքի հաստատման համար:

Հայերի և հայկական պետական կազմավորումների համար առավել բարենպաստը ժ. գ. դարի 40-ական թթ. երկրորդ կեսի-50-ական թթ. կարճատև ժամանակահատվածն էր, երբ արդեն ավարտվել էին ստեղծված թուրքացիների ուղեկցվող մոնղոլական գրավումները, և մոնղոլները ձեռնամուխ էին եղել գլխավորապես մահմեդական երկրների նվաճմանը: Այս փուլն էր, որ 1260 թ. քնդ-հատվեց Եգիպտոսի սուլթանությունից գործերից իլիխանական բանակի պարտությունը՝ Պաղեստինում, Այն Ջալուտի ճակատամարտում:

Ընդամենը երկու տարի անց սկսվեցին երկարատև բախումները Ոսկե Հորդայի խաների և իլիխանների միջև: Ժ. գ. դարի 60-ական թթ. էլ աստիճանաբար ձևավորվեց Հյուսիս-հարավ առանցքը երկու մահմեդական պետությունների՝ Եգիպտոսի մամլուքյան սուլթանության և Ոսկե Հորդայի միջև, որն առաջին հերթին ուղղված էր իլիխանության դեմ: Կռիվները Եգիպտոսի մամլուքների և Իրանի մոնղոլների միջև ընթանում էին ժ. գ. դարի ամբողջ երկրորդ կեսում և ժ. գ. դարի սկզբում, և Հյուսիսին իլիխանությունը: Պայքարը Եգիպտոսի մամլուքյան սուլթանության դեմ՝ ամենաաղետալի հետևանքներն ունեցավ ինչպես Հատինական Արևելքի խաչակրաց պետությունների և Կիլիկյան Հայաստանի համար, այնպես էլ պատմական հեռանկարի տեսանկյունից: Ժ. գ. դարի 80-90-ական թթ. իլիխանությունում ծավալված զահակալական կռիվներին հուանդուն կերպով մասնակցում էին Իկոնիայի սուլթանության մոնղոլական կառավարիչները, որի հետևանքով մոնղոլները թուլացրեցին փերահակոթությունը փոքրասիական շրջանների նկատմամբ: Այդ ամենի արդյունքում ժ. գ. դարի վերջում սկսվեց Օսմանյան և Կարամանյան թուրքական իլիխանությունների փերիլը, որն սպառնալից չափեր ընդունեց ժ. գ. դարում: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ ժ. գ. դարի առաջին կեսում էր, որ զրվեցին հետագա դարերի կործանարար աշխարհաքաղաքական իրադրության հիմքերը: Իլիխանության քայքայումը, որն առանց քնդ-հատվելու շարունակվեց 1336 թ. մինչև 1353 թ. ուղի հարթեց նոր կայսրությունների՝ արևմուտքում Օսմանյան թուրքիայի, արևելքում Սեֆյան Իրանի հզորացման համար:

Իրականացնելով իրենց ռազմաքաղաքական ծրագրերը՝ մոնղոլ նվաճողները հատուկ քաղաքականություն էին վարում ռազմավարական նշանակություն ունեցող առանձին շրջանների նկատմամբ: Այսպես, ժ. գ. դարի 50-ական թթ. վերջին նրանք նպատակեցին Երզնկայի հայկական իլիխանության ստեղծմանը, որի գլուխ էին կանգնած Տեր-Սարգիս Եգիպտոսի և նրա որդի Հովհաննես իլիխանը: Թեև Հստակ ավյալներ չկան, այնուամենայնիվ զեմլար չէ ենթադրել, որ մինչև հոգևոր ասպարեզում աչքի ընկնող դիրք գրավելը Տեր-Սարգիսը եղել է տեղական խոշոր ավատատերերից մեկը: Սոցիալական բարձր ծագումն

էլ նրան թույլ է տվել իր և որդու ձեռքում կենտրոնացնել աշխարհիկ և հոգևոր իլիխանության բոլոր լծակները: Սուվար հայկական բնակչությունը ունեցող Երզնկան մոնղոլների համար հուսալի հենարան էր Իկոնիայի սուլթանության արևելյան սահմանագծում: Հայկական իլիխանությունից գոյությունը այդ գոտում ինքնուրույնության ուղարկվելու է ներկայացնում, քանի որ այն յուրօրինակ «կղզյակ» էր ազգային քաղաքական իլիխանության հիմնական օջախների՝ Հյուսիս-արևելյան Հայաստանի և Կիլիկիայի թագավորության միջև: Դիտելի հանգամանք է նաև, որ մինչև Տեր-Սարգիսի և նրա որդի Հովհաննեսի եղերական սպանությունը 1276 թ., Երզնկայում ծաղկման էր հասել մշակութային կյանքը, ընդ որում քաղաքի հայ տիրակալները աչքի են ընկել ոչ միայն որպես ձեռագրերի պատվիրատուներ, արվեստի և մտավոր գեղամուտքների հովանավորներ, այլև Հովհաննես իլիխանը ինքն էլ հանգես է եկել ինքնուրույն ստեղծագործություններով:

Ժ. գ. դարի երկրորդ կեսում մոնղոլների հետապնդած նպատակներով է հնարավոր քայքայել նաև Երզնկայի պարտությունից հար և նման իլիխանության առաջացումը Արտագում: Ժ. գ. դարի մոտավորապես 70-80-ական թթ. այստեղ հաստատվել էր պարոն Մանվելը, որի որդիներ պարոնտեր Զաքարիա Ծործորեցին և պարոն Պետրոս իրենց ձեռքում էին կենտրոնացրել Արտագի գավառի հոգևոր և աշխարհիկ իլիխանությունը: Ռազմաքաղաք է, որ այս ընտանիքը ևս սերում էր ավատատիրական տոհմից և հինավուրց խնամիական կապեր ուներ Սյունիքի Օրբելյանների հետ: Երզնկայի և Արտագի հայկական իլիխանությունների նմանությունն ակնհայտ է նաև նրանց բեղմնավոր հոգևոր ու մշակութային վաստակի առումով:

Ժ. գ. դարի երկրորդ կեսում-ժ. Գ. դարի սկզբում հայոց քաղաքական իլիխանության վերապրման ուղադրված փաստեր են հանդիպում անգամ Հայաստանի հարավ-արևմտյան և հարավային գավառներում: Այսպես, Ակնի և Չմշկաձագի միջև ընկած շրջաններում, որտեղ գոյություն ուներ սուլթանի սուլթանի հայ քաղաքական բնակչությունը, կառավարում էին Մավուսների տոհմի ներկայացուցիչները: Մեծուղն ուղադրության է արժանի ասորի պատմիչ Աբուլ Թարաջի այն հազորդները, որի համաձայն մինչև 1290 թ. (որ թվականից սկսած՝ մնում է անհայտ) հայ տիրակալ էր իշխում Մուշ քաղաքում:

Հայ էթնիկ տարրի քաղաքական իլիխանության որոշակի ամրապնդումն ամենից առաջ բացատրվում էր մոնղոլական գերիշխանության շրջանակներում հայերի ռազմական հզորության անով: Նվաճողների միջավայրում ամենաաչքի ընկնող դիրքը պատկանում էր ռազմաքոչվորական ավագանուն, հետևաբար հպատակ ժողովուրդների ավագանու բարձրացման միակ ուղին ռազմական հաջող ծառայությունն էր:

Հայ ավատատիրական ավագանու իլիխանության աճին կարելի է հետևել նաև ավատատիրական իմունիտետի զարգացման, խոշոր իմունիտետների կողմից ոչ միայն հարկային, այլև վարչական ու դատական իմունիտետի ձեռքբերման գործընթացի լուսաբանման միջոցով: Այս առումով հատկապես բարենպաստ պայմաններ առաջացան հենց ժ. գ. դարում, քանի որ կենտրոնական իլիխանության ու Զաքարյանների դիրքերի անկման պայմաններում հզոր ավատատիրական ընտանիքները գգայի արտոնություններ էին ձեռք բերում: Առանձնապես հարուստ տեղեկություններ են պահպանվել ավատատիրական ավագանու ստեղ-

ծած տնտեսական-վարչական և դատական ապարատի վերաբերյալ: Իշխանների վարչական ապարատում հաճախ ծառայում էին հոգևորականները, ուստի եկեղեցական ժողովները արգելում էին եկեղեցականներին հարկային-տնտեսական և այլ պաշտոններ վարել:

Հայ ավատատիրական ավագանու փիճակը կտրուկ փոփոխությունների ենթարկվեց ժ. դարի առաջին կեսում, երբ սպառնալից չափեր ընդունեցին ապրանքային արտադրության քայքայումը և քաղաքային կյանքի անկումը: 1348 թ. Հայաստանում ևս տարածում գտավ ժանտախտի սարսափելի համաճարակը՝ «սև մահը»: Ուժգնացող տընտեսական ճգնաժամի հետևանքով նախ դանդաղեցին, իսկ հարյուրամյակի երկրորդ կեսում առհասարակ դադարեցին շինարարական աշխատանքները: Բոլոր հիմքերը կան կարծելու, որ այդ ճգնաժամային փիճակը իլլիսանություն հյուսիս հարկային քաղաքականության և անվերջանալի ներքին կռիվների հետևանք էր: Նման իրավիճակում տնտեսապես և քաղաքականապես թուլացած Հայ ավատատիրական ավագանու մեծ մասը չզիմացավ փորձություններին և թողեց պատմական ասպարեզը:

Բաժին երկրորդ. «Հայ ավատատիրական ավագանին ժ. դարում-ժ. դարի առաջին կեսում»: «Ընդհանուր դիտարկումներ»: Ատենախոսության այս հատվածում որոշ տեսակետներ են արտահայտված դարաչրջանի Հայ ավատատիրական տների սոցիալական պատմության հանգուցային խնդիրների վերաբերյալ: Ամենից առաջ շարադրված է ավատատիրական աստիճանակարգության նկարագրությունը: Առկա նյութերը ցույց են տալիս, որ ներավատատիրական հարաբերությունները արտացոլող «բուրգը» առավել բարդ կառուցվածք է ունեցել ժ. դարի սկզբում և 1236 թ. մոնղոլական արշավանքին հանրաբերության աստիճանակարգության և ստորակայական հարաբերությունների շղթան այսպիսի պատկեր է ներկայացնում. Վրաց թագավորներ-Չաքարյաններ-Չաքարյանների անմիջական ստորակայաների ստորակայաներ: Ավատատիրական աստիճանակարգության ավելի ստորին սանդուղքների վերահանումը կապված է դժվարությունների հետ:

Հայտնի է, որ գերակա-ստորակայական կապերի հաստատումը սրբազործող արարողությունները խորհրդանշական իմաստավորում են ունեցել, նույնիսկ համեմատության եզրեր գոյություն ունեն այդ միջնադարյան ծեսերի և ավանդապահ հասարակություններում գոյատևող համանման սովորությունների միջև: Այս կապակցությունը ուշադրամ է մեր ժողովրդական փեսուլում պատկերված որդեգրման սովորությունը կապը՝ հոր և որդու փոխհարաբերությունների հաստատում համաստող միջնադարյան արարողությունների հետ: 1098 թ. Ուլստայում տեղի ունեցած այդպիսի ծիսակատարության վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում խաչակրաց պատմիչները, ընդ որում նրանք հատուկ շեշտում են այդ արարողության հայկական բնույթը: Միսակատարության ժամանակ գերակայի և ստորակայի գրկախառնվելու և գերակայի՝ ստորակային համբուրելու արարողության մասին որոշ վկայություններ են պահպանվել նաև Հայ պատմիչների երկերում:

Գլուխ առաջին. «Չաքարյաններ»: Մինչև Սարգիս Մեծի օրոք ընտանիքի աննախընթաց բարձրացումը, Չաքարյանները համեստ

զիրք էին զբաղվում Լոռե-Տաշիրի թագավորության ավատատիրական տների շարքում: Կյուրիկյանների թագավորության անկումից հետո Չաքարյանների գերակայները պետք է գարձած լինեին վրաց արքունիքում ազդեցիկ պաշտոնների տիրող Օրբելի իշխանները: 1176-77 թթ., Օրբելիների գլխավորած խոշոր ավատատիրական ապստամբության ժամանակ, Չաքարյանները գտնվում էին ապստամբական բանակում, բայց հետագայում միացան թագավորական զորքերին: Այդ քայլը վճարական գեր խաղաց, ապահովելով Սարգիս Մեծի զորքերի գլխապետույթ ամրապնդումը վրաց արքունիքում: Այդ ժամանակից սկսած Չաքարյանների տոհմը ստանձնեց Հայ ավատատիրական ավագանու անվերապահ առաջատարի դերը, այն չզիջելով չուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում: Տոհմի բուռն վերելքի և ծաղկման փուլը համընկավ ժ. դարի վերջին միլեկիս տասնամյակի և մոնղոլական նվաճմանը և խորհրդած ժամանակահատվածի հետ: Այդ հիմնամյակի ընթացքում է՝ որ աննախընթաց զիրք ձեռք բերեցին անխտիր բոլոր Չաքարյանները: Ընտանիքը բաժանվեց չորս սոսնձայուղերի, ընդ որում գերդաստանի կրտսեր սոսնձայուղերը թմոզվեցին և Վահրամյանները, անընդհատ փոփոխեցին տարածքային առումով: Ժ. դարի առաջին տասնամյակներին տոհմի անդամներին և ստորակա ընտանիքներին պատկանող տարածքները ընդգրկում էին գրեթե ողջ Հյուսիս-արևելյան Հայաստանը:

Չաքարյան սոսնձայուղերի բաժանումը Չաքարյանների գերդաստանում սկիզբ է առել դեռևս ժ. դարի վերջում: Առավել վաղ ավարտվեց թմոզվեցինների իշխանության կազմավորումը, քանի որ նոր տարածքային ձեռքբերումների համար նրանց ունեցած հնարավորությունները սահմանափակ էին: Թմոզվեցինների համեմատությամբ ավելի երկար տևեց Վահրամյանների իշխանության ձևավորումը: Այդ ընտանիքը շարունակում էր հայկական տարածքների ազատագրումը նաև ժ. դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում: Ժ. դարի կեսերին տեղի ունեցավ Սարգիս Մեծի որդիների «ընդհանուր ժառանգություն» ներկայացվող, բայց իրականում դեռևս ժ. դարի վերջում ժ. դարի սկզբում հաստատված սահմանափակ, տարածքների վերջնական բաժանումը Ավագյան և Եահնշահյան տների միջև: Ամբողջ գերդաստանը ներկայացնելիս՝ չորս սոսնձայուղերին նախորդում են Ավագ Չաքարյանները՝ ընտանիքի միասնականության ժամանակաշրջանի գործիչները՝ Սարգիս Մեծը, նրա նախնիները, եղբայրները, որդիները և դուստրերը:

Երկր երկուսուկես հարյուրամյակի ընթացքում Չաքարյանների զանազան սոսնձայուղերի դավանական դիմորոշումը հատկանշվել է առանձնահատուկ բարդություններ: Չաքարյանների առնչությունները միաբնակ և երկաբնակ տարբեր վանքերի հետ՝ նրանց բարձրացումների և անկումների, քաղաքական ու դավանական կողմնորոշումների մեջ կատարված տեղաշարժերի արտացոլումն են: Չաքարյանների դավանական քաղաքականության համակողմանի և անաչառ հետազոտությունը համոզում է, որ քաղկեդոնական դառնալու պարագայում անգամ նրանք նվիրված էին մեռած հայոց եկեղեցու շահերի պաշտպանությանը և տնտեսական դիրքերի ամրապնդմանը: Առանձին հոգևոր կենտրոնների քաղկեդոնականացումը ժ. դարում, դավանական անհանդուրժողականության դրսևորումները Իվանե Ա-ի կողմից, չեն փոխում ընդհանուր պատկերը: Դավանական առումով տրկաբնակության

նր պատկանելը զուգակցվում էր ազգային եկեղեցուն գարմանալի Հետևողականությունը հավատարիմ մնալու հետ:

Չափազանց ինքնատիպ է եղել, հատկապես ժԳ դարի երկրորդ կեսում-ժԴ դարի սկզբում, Չաքարյանների էթնոմաշակութային դիմապատկերը: Հայկականից բացի նաև վրացական և նույնիսկ մահմեդական ընտանիքների հետ խնամակերպ կապերը առօրյա երևույթ էին դարձել Չաքարյանների տոհմում: Օրինաչափ է, որ նրանց մեծամասնությունը համար բնորոշ դարձած լինեք Հայ-վրացական երկկողմությունը, մոնղոլական ժամանակաշրջանում՝ հնարավոր է ետպիզությունը: Էթնիկապես Հայ, Հայոց էթնոմաշակութային միջավայրի հետ կապված լինելով, Հայոց եկեղեցուց չօտարանալով հանդերձ, Չաքարյանների գլխավոր սոցիալադեմոկրատիկ հարել են քաղկեդոնականությունը, չփոխել են վրաց հասարակական-քաղաքական շրջանների հետ, բարձրագույն պաշտոններ են վարել վրաց արքունիքում, ծանոթ են եղել նաև այդ ժամանակաշրջանում իր ազդեցություն սահմանները ընդլայնած արևելյան մշակույթի հետ: Քաղաքական, դավանական և մշակութային գործոնները, ուշագրավ նրբերանգներ հաղորդելով Չաքարյանների ընդհանուր դիմապատկերին, չէին փոխում տոհմի Հայկական բնույթը: Անկասկած է, որ Չաքարյանները ոչ միայն գիտակցում, այլև, հարկ եղած դեպքերում, չեչտում էին իրենց էթնիկական պատկանելությունը: Տոհմի պատմության վերջին կեսերը Չաքարյանները կաշրջանում Չաքարյանները կորցրել էին իրական կապերը վրաց արքունիքի հետ և վերածվել էին Անիի, Բջնիի, Արագածոտնի տեղական տիրակալների: «Աթաբեկ և ամիրապատար» կամ սոսկ «աթաբեկ» կոչումները նրանց տրվում էին ավանդույթի ուժով, որպես տիրապետ: Վերջին Չաքարյանները՝ Ծահնուհ Գ-ն, նրա որդիները, Շիրվանշահը և ուրիշներ, Հայտնի են միայն Հայկական սկզբնաղբյուրներից:

Չաքարյանների ծագման վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանվել են չորս տարբեր վարկածներ: Իրանցից երկուսը զարգացվել են անմիջականորեն Չաքարյանների կողմից, արտացոլված են ժԶ դարի վերջի-ժԳ դարի սկզբի Հայտնի ու արաբերեն վիճակագիր Հուշարձաններում և կոնկրետ պատմական պայմանների ու քաղաքական ծրագրերի արգասիք են: Մյուս երկուսն իրենց արտահայտությունն են գտել վրացական և Հայկական պատմագրության մեջ և կրում են պատմադրական ավանդույթի ակներև ազդեցությունը: Ատենախոսությունում տրված է իրանցից յուրաքանչյուրի համակողմանի վերլուծությունը, ընդ որում պատմագրիտական քննությունը նախորդել է աղբյուրագիտական հետազոտությունը: Ուսումնասիրությունը սկսվել է այն ավանդությունների վերաբերյալ արգաքանամբ, որը ներկայացված է ժԳ-ժԷ դարերի Հայ պատմագրության չորս հուշարձաններում (Կիրակոս Գանձակցի «Պատմություն Հայոց», Վարդան Արևելցի «Պատմություն տիեզերական», Չաքարիա Մարկավազ «Կոնդակ», Անանուհ Հեղինակ (Մինաս Համթեցի) «Պատմություն քաղաքին Յանույ») և, առանձին վերապահություններով հանդերձ, որպես արժանահավատ է դիտվում ժամանակակից հետազոտություններում: Պատմիչների այս քառյակը իր առջև փաստորեն հետազոտական խնդիր է դրել խորամուկ լինել Չաքարյանների սոցիալադեմոկրատիկ մեջ, բայց ասիայված է եղել իր եզրակացությունները կառուցել անփաստահիմն յուրեղբոր վրա: Բավական է ասել, որ նրանցից ոչ մեկը չի կարողացել պարզել Չաքարյանների ճշգրիտ սոց-

մածառը: Ուստի ժամանակն է հրաժարվելու Չաքարյանների ծագման հարցում ժԳ դարի Հայ պատմիչների անսխալականությունը պատրանքից և ձեռնամուխ լինել նրանց հաղորդած ավանդության կառուցվածքային վերլուծությունը:

Ինչպես պարզվում է, Մովսես Խորենացուց դարեր հետ ստեղծագործած պատմիչները, Չաքարյանների ծագման տեսությունը մշակելիս, ուղղակի վերաբերված են խորենացիական պատրաստի կերպածները (մոգեիները): Այդ կերպածները ժամանակին Պատմահայրը կերտել է ժողովրդական մշակույթի ընդհանրացման ու տեսականացման հիման վրա, ուստի միջնադարյան իրականություն մեջ դրանք մատենագրական չոր ու ցամաք կաղապարներ չեն դիտվել և մշտապես գործառվել են: Ուստի պատմիչների շրջանում, մի կողմից, և ժողովրդական վեպի՝ «Սամա ծեբերի» միջև, մյուս կողմից, Հայացքների գարմանալի միասնություն է դիտվում:

Հետևելով Մովսես Խորենացուն, Հայ պատմիչները Չաքարյաններին վերագրում են հնամենի, ազնվագարմ և օտար ծագում: Տոհմի Հայտնիները Հայաստանում և Վրաստանում դիտվում է Ախախայրե-Արթուրի ինչ-որ ժամանակ պատահած Աերքաղաքական կարևոր անցուղիների և հարկադրաբար տեղի ունեցած զաղթի հետևանք: Ուշագրավ է, որ պատմիչները նախահայրերի և գաղթի ուղղության հարցերը պարզաբանելիս ևս դուրս չեն եկել խորենացիական պատկերացումների շրջանակից: Չաքարյանների նախնական բնակությունը չորսն է դիտվել Հայաստանից հարավ ընկած տարածքը՝ «Բաբելական խել»-ը (համար. Հայկ Նահապետի (ըստ Մովսես Խորենացու՝ Հայ նախարարական տոհմերի մեծ մասի նախահոր) և Ասորեստանի թագավոր Սենեբերի մի որդիների Սենասարի և Ադրամելեքի (Պատմահոր համոզմամբ՝ Արծրունիների, Գուռնիների ու Աղձնիքի բռնչիների նախնիների) հետ կապված զրգազները «Հայոց պատմությունում»): Խորենացիական կերպածներին հավատարիմ պատմիչները այնուհետև նկարագրում են Չաքարյանների գաղտնալուր նոր հայրենիք, այստեղ գտած ընդունելությունը, այդ տոհմի ծառայությունները Հայ և վրացի տիրակալներին և հետագա առաջընթացն ու բարձրացումը: Այսպիսով կարելի է հավաստել, որ Հայ պատմիչները Չաքարյանների վաղնջական պատմությունը շարադրել են՝ ելնելով սեփական պատկերացումներից և ենթադրություններից: Նրանց վկայություններին անվերապահ հավատ ընծայող հետազոտողները խուսափել են մի շարք հարցերի լուսաբանությունից, որոնք անխուսափելիորեն ծագում են Չաքարյանների էթնիկական ու սոցիալական ծագման խնդրի արծարծելիս: Այսպես, Չաքարյանների նախնիներին Տաշիր-Ջորագետ գաղթած քրդեր համարողները աչքաթող են անում իրադարձությունների ժամանակյա պատմաաշխարհագրական միջավայրի հարցը: Առանց երկբայելու կարելի է պնդել, որ ժԱ դարի կեսերից մինչև ժԶ դարի սկիզբը ընկած ժամանակաշրջանում, երբ և, ըստ ուսումնասիրողների, տեղի է ունեցել Չաքարյանների կարծեցյալ գաղթը, Կյուրիկյանների թագավորությունը քաղաքական հզորություն անկում էր ապրում: Ընդհանուր թագավորությունում էթնիկական պատկանելության փոփոխություն համար անհրաժեշտ նախադրյալներ գոյություն ունեցին նաև միատարր էթնիկական ու մշակութային միջավայրի առումով: Այդ տարածքում նկատելի ազդեցություն ունեցող վրացական եկեղեցին, զգալի թիվ էին կազմում

վրացիները: Հեռեւաբար, Տաշիր-Ձորագետում էլ թնիկական ու դավանական միջավայրը այնպիսին չէր, որպեսզի հնարավոր լիներ հավատ ընծայել Չաքարյանների նախնիների «հայանալու» տեսությունը: Հավաստի փաստերը ցույց են տալիս, որ դժվար է խոսել Չաքարյանների նախնիների կրոնափոխությունից և հայադավան դառնալու մասին, երբ որ հենց նույն ժամանակաշրջանում հակառակ ուղղվածություն գործընթացներ էին տեղի ունենում: Տեղական ավատատերերը, ելնելով իրենց քաղաքական ու տնտեսական շահերից, հաճախ մահմեդականություն էին ընդունում:

Չաքարյանների նախնիների հայացման հավանականությունը հարցը բազմակողմանորեն քննարկելիս անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել քրդական էթնոսի ինքնատիպություն վրա: Հանրահայտ է, որ քրդական հասարակության կյանքում դարերի ընթացքում հակայական դեր են խաղացել ցեղային կաղծակերպությունը և առանձնահատուկ տնտեսավարությունը: Այդ էթնիկական յուրահատկությունները օտար միջավայրում հույժ կարևոր էթնոպահպանիչ գործոնի դեր են կատարել: Ինչպես երևում է ժ դարի կեսերից մինչև ժԲ դարի վերջը Դվինում և Անիում իշխած Շեղդադյանների օրինակից, քրդական ընտանիքը լիովին ի վիճակի էր նույնիսկ այդքան երկար ժամանակաշրջանում դիմադրովել հայկական միջավայրի ազդեցությունը:

Չաքարյանների ծագման երկրորդ Բագրատունիներից սերելու վարկածն արտացոլված է առավել մեծ թվով սկզբնաղբյուրներում, սակայն եռանդուն կերպով քարոզվել է համեմատաբար կարճ ժամանակահատվածում ու արձագանք չի գտել հայ և վրաց միջնադարյան պատմագրություն մեջ: Թեև, «Բագրատունիական» ծագման տեսությունն արտացոլել է միայն վիմազիր արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում, այնուամենայնիվ Բագրատունիների հաջորդը դիտվելու հավակնությունները զաղափարախոսական բազմակողմանի և ծավալուն հիմնավորում են ունեցել: Չաքարյանները իրենց արձանագրություններում յուրացրել են Անիի Բագրատունիների տիպոսաչափ մեջ մտնող կարևոր բաղադրիչներ, այդ թվում նաև «չահնչահ» ու «տիեզերակալ» պատվանունները: Չաքարյանները Անիի Բագրատունյաց ժառանգորդներն են հանդիսացել նաև «Հայոց եւ Վրաց» բնութագրումը իրենց տիպոսաչափի մեջ ընդգրկելու առումով: Նրանք իրենց իրավահաջորդությունը բնութագրել են նաև այնպիսի ձեռնարկումով, ինչպիսին Մանահինում Բագրատունիների կրտսեր տոհմաճյուղի կյուրիկյանների տոհմական գերեզմանոցը սեփական ընտանեկան հանգստարան դարձնելն է եղել: Բագրատունիներ-Չաքարյաններ ժառանգականությունը շեշտվել է վանքում կատարված այն վերակառուցումներով, որ իրականացրել են Չաքարյանները: Ամփոփելով Չաքարյանների Բագրատունիներից սերելու վարկածի քննությունը, կարելի է նշել, որ այդ տեսությունը ամենաքաղաքականացվածն է: Այն կյանքի է կոչվել ժԲ դարի վերջում, երբ Չաքարյանները իրապես տիրում էին Բագրատունիների ժառանգության զգալի մասին և շուտով ավելի էին ընդարձակելու իրենց պատկանող տարածքները: Պարզ է, որ Բագրատունիների և Չաքարյանների իրական ազդակցության մասին պնդելը կնշանակեր վերացարկվել միջնադարյան իրողություններից ու բառացի ընկալել սկզբնաղբյուրների մի մասի հավաստիացումները:

Չաքարյանների ծագման երրորդ վարկածը վկայված է Ամբերդի ա-

րաբերին վիմագրում, որտեղ Չաքարի ամիրապասալարը և Իվանե Ա-ն Արծրունի են անվանվում: Այդ փաստը հնարավոր է մեկնաբանել դարաշրջանի քաղաքական իրադարձությունների ետնախորքի վրա: Չաքարյանների Արծրունի կոչվելու հավակնությունները, ըստ երևույթին, Չաքարի և Իվանեի քաղաքական ծրագրերի յուրօրինակ արտացոլումն են: ԺԲ դարի վերջում-ԺԳ դարի սկզբում, երբ Շահ-Արմենիների ամիրայությունը իր ձգնաձեռն էր պարունակում և Չաքարյանները արշավանքներ ձեռնարկեցին դեպի Մանազկերտ, Արճեշ և Նյաթ, Արծրունի կոչվելով եղբայրները, թերևս, հատուկ նպատակ են հետապնդել: Արծրունի հռչակվելով նրանք կարող էին Վասպուրականի և հարակից տարածքների օրինական տիրակալի կեցվածք ընդունել և ակնկալել հիմնականում հայերով բնակեցված ամիրայությունից բնակչության անկախությունը:

Չաքարյանների տոհմակույնի հարցին անդրադառնում է նաև վրացի հեղինակ Թամար Թադևոս առաջին պատմիչը: Չաքարի ամիրապասալարին բնութագրելու առիթով նա նշում է, թե ականավոր գորավարը Արտաքսերքսես Երկայնաբազուկ Աբեմենյանի տոհմակիցն էր: Այս տեղեկությունն ոչ պատմական լինելն ակնհայտ է և վրացի պատմիչն անշուշտ սուրբ է սվել հին և օտար ծագման գերադասություն հայացքին, որը ազդեցություն ունի նաև վրաց միջավայրում:

Այսպիսով, Չաքարյանների ծագման չորս վարկածներից և ոչ մեկը իրողությունների հավաստի և անաչառ հավաստագրում չէ: Ուստի ուսումնասիրողներին մնում է ձեռքագտավել միջնադարյան ավանդությունների ազդեցությունից և եզրակացությունների հանգել ստույգ փաստերի հիման վրա: ԺԲ դարում, երբ Չաքարյանների տոհմն առաջին անգամ սկսեց ազդեցիկ դեր խաղալ Հայաստանի և Վրաստանի քաղաքական կյանքում, այն ուներ շեշտված հայկական դիմագիծ (անձնանուններ, միաբնակություն, ինամիական կապեր և այլն): Ընտանիքի անգամները ժամանակակիցների աչքում համարվում էին Հայոց պետականության շարունակողներ և Հայոց եկեղեցու հովանավորներ: Հայկական սկզբնաղբյուրները ամենայն հստակությամբ նշում են Չաքարյանների թե՛ դավանական առումով և թե՛ էթնիկապես («հայ ազգաւ եւ ուղղափառ հաւատով») հայ լինելը: Սոցիալական ծագմամբ Չաքարյանները հասարակ հայ ազնվականներ էին, նախ կյուրիկյանների, ապա Օրբելիների ստորականները:

Գլուխ երկրորդ. «Մանկանաբերդցիներ (Մաղունյաններ)»: Մահկանաբերդցիների տոհմը պատմավոր տեղերից մեկն է զբաղեցնում ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանի ավատատիրական ավագանին ներկայացնող ընտանիքների շարքում: Այս իշխանական տան առավել հզորության փուլերում նրա անդամների ազդեցության սահմանները դուրս էին գալիս Հայաստանի շրջանակներից, իսկ ԺԳ դարի 70-80-ական թթ. Մահկանաբերդցիները ակնառու դեր էին կատարում նաև Վրաստանի ճակատագրում: Տոհմի պատմության մեջ ակնհայտորեն առանձնանում են բարձրացման երկու փուլեր:

Առաջինի պայմանական սկիզբը կարելի է համարել 1124 թ., երբ վրացական բանակը հաստատվեց Անիում և Հյուսիսային Հայաստանի մի շարք ամրոցների թվում նաև Մահկանաբերդում: Այդ կամ հաջորդ մի քանի տարիների ընթացքում էլ, պետք է ենթադրել, սկիզբ են առել վրացական արքունիքի և Մահկանաբերդցիների տոհմի առաջին (մեկ

Հայտնի) ներկայացուցիչ Վահրամ իշխանի փոխհարաբերությունները: Եթե նկատի առնենք, որ Մահկանաբերողը կարող էր վրաց թագավորի սահմանների մեջ մտցվել 1124 թ. մայիս-օգոստոսին, իսկ Դավիթ Շինորդը մահացավ 1125 թ. հունվարին, ապա Մահկանաբերողի տեղերը ազդեցություն և դիրք են ձեռք բերել վրաց արքունիքում Դեմետրե Ա-ի (1125-1155/56) օրոք: Արդեն ժԲ դարի կեսերին նրանք հասցրել էին գրավել Տփլիսի քաղաքագետի պաշտոնը, այսինքն՝ նրանք բարձրացումը բավականաչափ արագ էր տեղի ունեցել: Վրաց արքունիքում ձեռք բերած դիրքով Մահկանաբերողները ժԲ դարի առաջին կեսին իրենց հավասարը չունեին հայկական բնույթների շարքում և այդ առումով Զաքարյանների նախորդները կարող են համարվել:

Մահկանաբերողների առաջին բարձրացումն ապահովող գործոնների շարքում, թվում է, որոշակի դեր են կատարել տոհմի անդամների գորավարական կարողությունները: Այսպես, ստույգ Հայտնի է, որ Վասակն ու Ամիր-Բուրդը, վարչական բարձր դիրք զբաղեցնելով Հանդերձ, ուղղակի աչքի են ընկնող գործիչներ էին:

Այն իրողությունը, որ Տփլիսի կառավարչի պաշտոնը կորցնելուց հետո Մահկանաբերողները ժԲ դարի 90-ական թթ. անկում ապրեցին, համոզիչ կերպով վկայում է, թե համեմատաբար փոքր հողային տիրույթներ ունեցող Մահկանաբերողների համար կառավարման համակարգում բարձր դիրք զբաղելը կենսականորեն կարևոր էր: Վարչական գործառնությունները բնութագրական էր մնում Մահկանաբերողների համար նաև ժԳ դարի առաջին կեսում, սակայն այն անհամեմատ համեմատ դիրք էր ապահովում: Այսպես, Խավասյանները վարում էին Շահնաշյան տան մասխուրթուխուցեսի պաշտոնը, իսկ բնույթի ավագ տոհմաճյուղի անդամները վարչական ծառայություններ կատարում էին Ավագյան տան հետ: Այսպիսով, Մահկանաբերողների առաջին բարձրացմանը (1124-1180-ական թթ. կեսեր) հաջորդեց վայրէջքը, որը տևեց շուրջ յոթ տասնամյակ:

Եթե Խավասյանները ժԳ դարի 60-ական թթ. դադարեցին որևէ նշանակալից դեր կատարելուց, ապա հենց այդ տասնամյակում սկսվեց ավագ տոհմաճյուղի սրբնթաց բարձրացումը: Եվ դարձյալ Մահկանաբերողների վերելքը պայմանավորված էր ոչ թե նրանց քաղաքական, ուղղակի կամ անուղղակի հզորությունը, այլ հաջողակ վարչական ծառայությունները ու իշխանությունները վարչա-բյուրոկրատական վերնախափի հետ կապերով, ինչպես նաև անձնական հատկանիշներով: Սաղուն Բ-ի շեշտակի բարձրացման գործում որոշակի դեր խաղաց նաև տարածաշրջանում առաջացած ռազմաքաղաքական յուրօրինակ կացությունը, մոնղոլական տիրապետության առանձնահատուկ մթնոլորտը: ԺԳ դարի երկրորդ կեսում ինչպես իշխանության կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում որոշ անձնավորությունների ու տոհմերի առաջին պլանում հայտնվելը և ապա զահավեթ կործանումը առօրեական երևույթ էին և բացատրվում էին մոնղոլական քոչվորական ավագանու նպատակաուղղված քաղաքականությունը: Ստեղծելով ուժերի այնպիսի հավասարակշռություն, որը չափազանց անկայուն էր և ցանկացած պահին կարող էր խախտվել որևէ կողմի նախահարձակ գործողություններով, մոնղոլական իշխանավորները մշտական լարվածության մեջ էին պահում նվաճած երկրները: Վրացական թագավորությունում ևս մոնղոլները նույնատիպ իրադրություն էին ստեղծել և խրախուսում

էին կենտրոնական իշխանությունը ընդդիմադիր ուժերի հանդես գալը: ԺԳ դարի 70-80-ական թթ. Սաղուն Բ-ն և Խուսթու Բուղան էին մոնղոլական քաղաքականության գործուն իրականացնողները և ստարավում էին ոչ միայն մոնղոլական ամենաբարձր վերնախափի, այլև իշխանության փաստական կառավարիչ Մահիր-Դիվան Ջուվեյնու ու անձամբ իշխանների կողմից: Սակայն թագավորական իշխանությունը Հակադիր նոր ու հզոր ուժի երկարատև գոյությունը ևս չէր մտնում մոնղոլների քաղաքական ծրագրերի մեջ, նրանք ակնհայտորեն գերադասում էին ասպարեզ տրամադրել ժամիշխանների մրցակիցներին և այսպիսով գյուրություն վերահսկել իրադրությունը: Նման պայմաններում Մահկանաբերողների ճակատագիրը կանխորոշված էր և նույնպիսի արագությունը նրանք կարող էին անհայտություն գերկն անցնել իշխանության կենտրոնում անընդհատ տեղի ունեցող քաղաքական ցնցումներից որևէ մեկի հետևանքով: Հենց այդ էլ վերջվորձ կատարվեց ժԳ դարի եզրավազիչ տասնամյակում, 1293 թ. Խուսթու Բուղայի մահապատից հետո: Այսպիսով, Մահկանաբերողների երկրորդ բարձրացումը տևեց շուրջ երեք տասնամյակ և անակնկալ կերպով ընդհատվեց: Այս անգամ, սակայն, տոհմի դիրքերը խարխվեցին վերջնականապես: Հողային տարածքների կորուստը, առավել ևս քաղաքների հարժուհի գրավումը, անվերադարձորեն գրկեցին Մահկանաբերողների նույնիսկ Հայաստանում նախկին դիրքը պահպանելու հնարավորությունից: Սկզբնաղբյուրներում վերջին անգամ հիշվելու ժամանակաշրջանում (1367 թ.) նրանք արդեն վերածվել էին շարքային հողատերերի:

Մահկանաբերողների ժԳ դարի երկրորդ կեսում երկարակույթյանը հարելու վերաբերյալ որևէ տեղեկություն աղբյուրներում չի պահպանվել: Սաղուն Բ-ի կողմից Գարեշայի վանքերին հովանավորություն ցույց տալը, Խուսթու Բուղայի՝ Երուսաղեմի Սուրբ Խաչի վանքի «աղապ»-ներում հիշատակվելը, Վանենիի հնարավոր հուղարկավորությունը Քոբայրի երկաբնակ վանքում, այնուամենայնիվ փաստեր են, որոնք մտածել են տալիս, թե այդպիսի դավանական անցումը տոհմի որոշ անդամներին համար լիովին բացառված համարել չի կարելի: Թե՛ միաբնակ և թե՛ երկաբնակ վանքերին նյութապես սատարելու փաստերը վկայում են, որ Մահկանաբերողների գործունեությունը Զաքարյանների լայնախոհ դավանական քաղաքականության գուգահեռն է ներկայացրել:

Բազմազան են եղել Մահկանաբերողների միջխնդրական առնչությունները: Հայկական տոհմերից դատ նրանք ինամիտական կապեր էին հաստատել ժամանակի նշանավոր վրացական և տարեթնիկ մահմեդական (պարսկականից բացի հնարավոր է նաև թյուրքական) ընտանիքների հետ: Առաջին բարձրացման ժամանակ նրանք բարեկամացել էին Զաքարյանների և արցախյան ազդեցիկ տոհմերից Հաթերբեցիների, երկրորդ վերելքի փուլում՝ Օրբելյանների, կրկին անգամ Զաքարյանների, վրացի Զաղեյիների և անգամ արքայական տան հետ: Մահմեդական ընտանիքների հետ ամուսնական առնչություններ են հաստատել թե՛ Խավասյանները և թե՛ ավագ տոհմաճյուղը: Մահկանաբերողների համար, ելնելով նրանց գործունեության ժամանակն տարածաշրջանի թեթևադրանքից, անշուշտ բնորոշ է եղել լեզուների (հայերենից ու վրացերենից բացի, նաև արևելյան) լավ իմացությունը, թեև ուղղակի

վկայություններ ունենք միայն Մազուն Բ-ի վերաբերյալ:

Տոհմի մշակութային ակտիվությունը (եկեղեցայինություն, ձեռագրերի պատմիրատվություն) զգալի է եղել միայն ժԲ դարի վերջին քառորդում-ժԳ դարի սկզբում: Մահկանաբերությունների համար, ելնելով նրանց պատմության պարբերացումից, գործունեության մշտարժանքակաճ շրջանակներից, մշակութային միջավայրից և այլ հանգամանքներից, հատկանշական է եղել «աշխարհաքաղաքացիության ոգին»: Տոհմի անդամները, առավել հզորություն երկու փուլում էլ, աչքի են ընկել փոխադարձ շփումների մեջ մտնելու կարողությունը, որը անհետևանք չէր մնալու՝ մշակութային նախնական նկարագրի վրա ազդելու և Մահկանաբերությունների հայրական էթնիկ դիմապատկերը զգալիորեն բարդացնելու հայեցակետից:

Գլուխ երրորդ. «Վաչուտյաններ»: Գործունեություն ասպարեզի տեսանկյունից Վաչուտյանները ռազմական գործիչներ են եղել: Արագածոտնի մի մասի վերակացությունը ստանձնելը պայմանավորված է եղել այդ տարածքներն ազատագրելիս Վաչուտյանների ցուցաբերած քաջությունը և պատերազմական վաստակով: Պատկերը մի փոխվել նաև ժԳ դարի առաջին տասնամյակների ընթացքում և ճինզոլական ժամանակաշրջանում: Իրողություն է, որ Վաչուտյանները ընդամենը «վերակացու գաւառիս» կարգված վարչական պաշտոնյաներ էին, իսկ «սեփական տէր գաւառիս Ամբերդոյ» էին ճանաչվում Ջաքարյանները: Առնվազն մինչև ժԳ դարի 60-ական թթ., Վաչուտյանների տիրակալական իրավունքները սահմանափակված են եղել: Ժառանգաբար տիրելով իրենց հանձնված հողերին, ինչպես որ գրականության մեջ մեկնաբանվում է Վաչուտյանների կարգավիճակը, այդ իշխանական տան անդամները այնուամենայնիվ չէին համարվում այդ տարածքների լիիրավ սեփականատերեր: Նրանց տիրակալական իրավունքները դժվար թե ամրապնդված լինեին նաև հաջորդ երեք տասնամյակների ընթացքում, երբ Քուրդ Ա-ի որդիները նվազ հզորություն ունեին: Ավելին, հնարավոր է, որ Վաչուտյանները ժԳ դարի 80-ական թթ.-90-ական թ. սկզբում կարճ ժամանակով կորցրել են իշխանությունը Արագածոտնում:

Հյուսիս-արևելյան Հայաստանի քաղաքական կյանքում և իշխանական տների աստիճանակարգության մեջ Վաչուտյանների դրազեցրած տեղի մասին կարելի է դատողություններ անել նաև այդ տոհմի խնամիրական կապերի հիման վրա: ԺԳ դարի առաջին կեսի վերջում և հաջորդ երկու կամ երեք տասնամյակների ընթացքում Վաչուտյան իշխանները ամուսնական գույքեր էին կազմել Համազասպյանների և Ուքանյանների տոհմերի իշխանուհիների հետ, իսկ այդ տները անշուշտ չէին մտնում իշխանական առավել ազդեցիկ գերդաստանների շմբի մեջ:

ԺԳ դարի վերջում-ժԷ դարի սկզբում իրավիճակը որոշակիորեն փոխվում է: Վաչուտյան իշխանուհիները երկիցս ամուսնանում են Արցախի նշանավոր տոհմերից Դուխյանների հետ, իսկ Քուրդ Բ-ն կնություն է առնում Ջաքարյան Խուանդ Խաթունին: Ինչպես երևում է, հենց այդ ժամանակ էլ Վաչուտյանները ինքնուրույն քաղաքական կապեր են հաստատել մոնղոլական իշխանության բարձրաստիճան վերնախավի հետ: Հավանաբար, գերակա-ստորակայական փոխհարաբերությունները Ջաքարյանների և Վաչուտյանների միջև հարատևել

են մինչև ժԳ դարի վերջի-ժԷ դարի սկզբի ժամանակահատվածը: ԺԷ դարի առաջին կեսի արձանագրություններում Վաչուտյանները այլևս չեն հիշատակում իրենց գերակա Ջաքարյաններին, ինչպես նաև ընդգծում են իրենց սերտ կապերը անմիջականորեն մոնղոլական իշխանների հետ: Նույն այդ ժամանակահատվածում որպես «Այրարատի տէր» և «տէր Անբերդոյ գաւառի» հանդես են գալիս Քուրդ Բ-ն և նրա որդի Թեոդոս Զրքինը: Այս ամենը մտածել է սուլիս, որ Ջաքարյանները և Վաչուտյանների նախկին առնչությունների բնույթը փոխվել էր, և Վաչուտյանները առավել էին քաջում երկրամասի սեփականատեր համարվելու իրենց հավակնությունները:

Այսպիսով, Վաչուտյանների տոհմի պատմությունը հնարավոր է բաժանել երեք փուլի: Առաջին՝ ժԲ դարի վերջին տասնամյակի-ժԳ դարի 60-ական թթ. ժամանակահատվածում Վաչուտյանները սերտորեն համագործակցում էին Ջաքարյանների հետ և հետևում նրանց քաղաքական ուղեգծին: Այս փուլը ամենաերկարատևն ու կայունն է (քաղաքական ու տնտեսական դիրքերի առումով) տոհմի պատմության մեջ: Վաչուտյանները իրենց պատմության երկրորդ փուլում ևս կիսում են Ջաքարյանների ճակատագիրը: ԺԳ դարի 60-ական թթ. վերջից սկսած նրանք անընդհատ զիջում են դիրքերը, անորոշ է անգամ տոհմի գլխավորների ժամանակագրությունը: Եվ վերջապես, Վաչուտյաններն իրենց պատմության եզրափակիչ՝ երրորդ փուլում (ժԳ դարի 90-ական թթ.-ժԷ դարի կեսեր) անկախանում են իրենց պատրոններից, բայց զգալիորեն ավելի ուշ, քան այդ հաջողվել էր Օրբելյաններին, Մահկանաբերություններին (Մազունյաններին) և Թաղբալյաններին (Պոռչյաններին): Վաչուտյանները միակն են հայ պատատիրական ավագանին ներկայացնող տոհմերի շարքում, որոնք չեն բացահայտել իրենց հավակնությունները «արքա», «արքայաշուք» տիտղոսներով կամ հին թագավորական տոհմերից իրենց ծագումը բխեցնելով: ԺԷ դարի 50-ական թթ. ասպարեզից հեռանալը վերջնական է եղել տոհմի անդամների համար: ԺԷ դարի 60-ական թթ. Վաչուտյանների տոհմական հանգստարանը, և թերևս տիրույթների մեծ մասը, արդեն հանձնվել էին մեկ այլ ընտանիքի:

Գլուխ չորրորդ. Խաղբակյաններ (Պոռչյաններ): Տոհմի պատմությունը նախանձելի լիակատարությունը լուսաբանող Գ.Հովսեփյանի աշխատության հրապարակումից հետո, վերջին տասնամյակների ընթացքում սակավաթիվ նոր նյութեր են միայն գիտական շրջանառության մեջ դրվել, որոնք քիչ են փոխում Խաղբակյանների պատմության ընդհանուր պատկերը:

Խաղբակյանների գործունեությունը ևս ծավալվել է գլխավորապես ռազմական բնագավառում: Տոհմի հիմնադիր Խաղբակ Ա-ն գործել է Խաչենում և, ինչպես երևում է նրա նորահայտ տապանաքարի քանդակներից, ռազմական գործիչ է եղել: Նրա որդիները, արդեն ժԲ դարի վերջում, կապեր են հաստատել Ջաքարյանների հետ և մասնակցել Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատագրման համար մղվող երկարատև մարտերին: Տոհմի ճյուղավորումը տեղի է ունեցել ժԳ դարի սկզբում: Հասակ գորավարը հաստատվել է Վայոց ձորում, իսկ կրտսեր տոհմաճյուղը մնացել է Խաչենում: Հետագայում Խաղբակյանները վարում էին Վայոց ձորի կողմնակալի և Ավագյան տան սպարապետի պաշտոնները: Նրանք Իվանի ավաբեկի և նրա ժառանգների ստորա-

կաներն էին ընդհուպ մինչև ԺԳ դարի 90-ական թթ.: Ավանդական փոխհարաբերությունները Խաղբակյանների և Ավագյան տան գլխավորների միջև խախտվեցին, հավանաբար, ԺԳ դարի վերջում, երբ ամեն կերպ շեղվում էին Խաղբակյանների կապերը ոչ թե նրանց անմիջական գերակա Զաքարյանների, այլ ուղղակի մոնղոլական իլխանների հետ: Խնամիրական կապեր հաստատելով այդ ժամանակահատվածում առավել հզորացած Օրբելյանների հետ, նրանք, հավանաբար, փերջնականապես խզեցին գերակա-ստորակայական փոխհարաբերությունները Զաքարյանների հետ: Սակայն ԺԴ դարի կեսերին Խաղբակյանները ևս կորցրեցին նախկին հզորությունը, և նրանց մասին տեղեկությունները սկզբնաղբյուրներում կարուկ կերպով նվազում են:

Խաղբակյանների էթնոմաշակութային դիմապատկերի պարզաբանումը դժվարություններ չի հարուցում: Տոհմի հոգևոր կենտրոններն էին քաղաքային միաբնակ վանքերը: Տոհմը կարևոր դեր է խաղացել նաև մշակութային բնագավառում: Տոհմի կրտսեր ոստերից մեկի ներկայացուցիչը պետք է լիներ նշանավոր մատենագիր Խաչատուր Կեչառեցին: Հսկայական էր Խաղբակյանների ավանդը միջնադարյան հայ արվեստի պատմության մեջ: Նրանց հովանավորություն էին պարտական իրենց ծաղկման համար քաղաքների հոգևոր և ուսումնագիտական կենտրոններ, այդ թվում նաև Գլաձորի համալսարանը:

Վերջաբանում, նկատի առնելով հայ ավատատիրական տոհմերի գործունեության արտաքին քաղաքական միջավայրը և տիրապետող դասակարգի ներքին զարգացման օրինաչափությունները, առաջարկվում է դարաշրջանի ավատատիրական ավագանու և առհասարակ հայ ավատատերերի դասակարգի պատմության հետևյալ պարբերացումը: Ուսումնասիրվող հարյուրամյակների շրջանակներում կարելի է առանձնացնել չորս ժամանակաշրջան:

Առաջին՝ ԺԲ դարի սկիզբը-80-ական թթ. առաջին կեսը ներառող ժամանակահատվածը հնարավոր է բնութագրել որպես «Մեծ սելջուկների» սուլթանության փլուզումից հետո Հայաստանում առաջացած մահմեդական քաղաքական կազմավորումների հզորացման և հայկական տարրի քաղաքական դիրքերի սահմանափակման ժամանակաշրջան: Բավական է նշել, որ այդ տասնամյակների ընթացքում են անհետանում հայկական իշխանական տների գրեթե բոլոր մնացորդները Հարավային Հայաստանում, ասպարեզից հեռանում են Լոռեի և Մյուսնյաց թագավորությունները, ծանր փորձությունների են ենթարկվում Արցախի ավատատիրական տոհմերը: Ժամանակաշրջանի ավարտին նշմարվում են նաև ապագա քաղաքական վերածնունդի սաղմերը: Վրաց թագավորության մեջ ներգրավված շրջաններում ուժ են կուտակում տեղական հայկական ընտանիքները, որոնք կարևոր դեր են սկսում խաղալ նաև արքունիքում: Մահմեդական ամիրայությունները մեծազույն ջանքեր թափելով են կարողանում ճնշել անեցիների ազատագրական պայքարը, որը դեկավարում էր քաղաքային պատրիկիությունը («գլխավոր քաղաքին»): Հայաստանի տարածքի մեծ մասի մահմեդական քաղաքական կազմավորումները թեև կոխում են ներքին դժվարությունների և անկայունության փուլ, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում հայկական տարածքների ազատագրման համար:

Երկրորդ՝ 1186-1235 թթ. ժամանակաշրջանը լիովին հստակորեն է առանձնանում. այն սկիզբ է առնում 1186 թ. անեցիների կողմից Սա-

աքար ամրոցի գրավումով և ընդհատվում է մոնղոլական գլխավոր արշավանքի անմիջական նախօրյակին, երբ ազատագրվեցին Արաքսից հարավ ընկած Սուրբարին և Կաղզվանը: Կարևոր է ընդգծել, որ հայկական երկրամասերի ետգրավումը արդյունք չէր որևէ բախտորոշ ճակատամարտի: Այն իրականացվում էր հիմնականում հայկական գործողականների ջանքերով, սահմանամերձ ռազմավարչական միավորների կողմնակալությունների նախաձեռնությամբ, թեև, անշուշտ, վրաց թագավորների օժանդակությամբ: Հետևաբար և ակնհայտ է այդ կեսդարյա պայքարի ազդեցությունը՝ հայկական տիրապետող դասակարգի կազմում ռազմական ավագանուն բացահայտ գերիշխանություն հաղորդելու առումով:

Երրորդ փուլը սկսվում է մոնղոլների կողմից Հյուսիս-արևելյան Հայաստանի գրավմամբ (1236 թ.) և ավարտվում է Ղազան խանի տիրակալության տարիներով (1295-1304 թթ.): Այս ժամանակաշրջանը ներքուստ բավականաչափ հակասական է: Անշուշտ աչքի են զարնում արհավիրքները: Մոնղոլական նվաճման ընթացքում և ապա օտար երկրներում հանուն մոնղոլների մղվող պատերազմներում բնաջնջվում է հայոց գործի զգալի մասը: Բոլոր իշխանական տները ծանր կախվածություն մեջ են ընկնում նվաճողներից, արդեն ԺԳ դարի 60-70-ական թթ. մեծատոհմիկ ավատատերերից շատերը հարկազրկված են լինում վաճառահանել հայրենական կալվածքները, խորանում է Հայաստանի տնտեսական ճգնաժամը: Այնուամենայնիվ, մոնղոլական լծի ողջ ծանրություններում հանուն տիրապետող դասակարգի գործառությունը Հայաստանում, անհերքելի է հայ ավատատերերի իշխանության ամրապնդումը կախյալ գյուղացիության նկատմամբ, հայ իշխանները և ազատները ռազմաքաղաքական ուժ են ներկայացնում մոնղոլական տիրապետության ողջ պատմաշրջանում: Նշված տասնամյակները միանշանակ չի կարելի գնահատել նաև մոնղոլների ռազմաքաղաքական պատմության տեսանկյունից: Ժամանակաշրջանի հաղթական սկիզբը ԺԳ դարի 80-90-ական թթ. փոխարինվեց ակնբախ պատերազմական անհաջողություններով, ի հայտ եկան վերահաս անկման աստանշանները: ԺԳ-ԺԴ դարերի սահմանագիծը ճակատագրական սլաշ էր Իրանի մոնղոլական պետության պատմության մեջ. Ղազան խանի կառավարման կարճատև շրջանում արտաքին ու ներքին դրություն կայունացման փորձերի ճախողումից հետո սկսվեց իլխանության դահլիճ անկումը:

Հայ տիրապետող դասակարգի ԺԲ-ԺԴ դարերի պատմության մեջ առանձին, չորրորդ փուլ է կազմում ԺԴ դարի սկզբի-նույն Հարյուրամյակի 50-ական թթ. ժամանակահատվածը: Հետզհետ խորացող համակողմանի ճգնաժամի պայմաններում կարուկ ընկնում է հայ իշխանական տների տնտեսական հզորությունը, նվազում են նրանց եկամտի աղբյուրները: Իլխանության փլուզումը, անվերջ կոլիզները գահի տարբեր հավակնորդների միջև և իլխանության անհեռանկարային պատերազմները Ոսկե Հորդայի և Երկրորդ մամլուքյան սուլթանության դեմ ծայրաստիճան ծանր են անդրադառնում նաև Հայ ավատատերերի քաղաքական ու ռազմական հզորության վրա: Հայ իշխանական տների մեծ մասը հողեկարք է ապրում և հարկազրկված է լինում ընդմիջապես հեռանալ պատմական ասպարեզից:



Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակությունները.

- 1) Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980 (16 մամուլ):
- 2) Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, Աշխատասիրությունը Հ. Գ. Մարգարյանի, Երևան, 1983 (8,75 մամուլ):
- 3) Զալալ աղ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ,- «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 4, էջ 125-139:
- 4) Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ,- «Լրաբեր» (հաս. գիտ.), 1982, թիվ 3, էջ 72-81:
- 5) К датировке и интерпретации "Типика" Ваханского пещерного монастыря.- "Кавказ и Византия", вып. 2, Ереван, 1980, с.81-86.
- 6) Монашество и монастырское хозяйство в Армении и Грузии в XI-XIII вв.- Бартольдские чтения. 1982, Москва, 1982, с. 39-40.
- 7) К вопросу о личности и деятельности "некоего Шадина",- "Кавказ и Византия", вып. 3, Ереван, 1982, с.64-72.
- 8) Հերզ դավառի և Հերք (Հերքան) բերդի տեղորոշման շուրջը,- «Բանբեր Երևանի Համալսարանի», 1984, թիվ 3, էջ 123-129:
- 9) Феодалный иммунитет и процесс закрепощения крестьян в Армении и Грузии в XI-XIII вв.- "Кавказ и Византия", вып. 4, Ереван, 1984, с.5-20.
- 10) Մուհթասիրության ինստիտուտը Հայաստանի քաղաքներում XI-XIII դդ.- «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թիվ 1, էջ 114-122:
- 11) Վրպական տարրերը X-XII դարերի հայ պատմագրության մեջ,- «Պատմա-բանասիրական հանդես», 1987, թիվ 4, էջ 41-47:
- 12) Об участии армян и грузин в Химской битве 1281 года,- "Кавказ и Византия", вып. 5, Ереван, 1987, с.14-21.
- 13) К переводу и пояснению одного отрывка "Истории и восхваления венценосцев",- "Кавказ и Византия", вып. 6, Ереван, 1988, с.50-52.
- 14) Քաղաքական կացությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII-XIII դդ.),- «Պատմա-բանասիրական հանդես», 1990, թիվ 4, էջ 39-46:
- 15) Տիրապետող դասակարգը Հայաստանում XII-XIII դարերում,- «Պատմա-բանասիրական հանդես», 1990, թիվ 4, էջ 39-46:
- 16) "Хроника страны Алуанк" Мхитара Гоша (состояние изученности памятника).- "К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении", Ереван, 1988, с. 214-224.
- 17) Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ,- «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ

2-3, էջ 139-151:

- 18) Զաքարյանների ծագումը,- «Պատմա-բանասիրական հանդես» 1994, թիվ 1-2, էջ 156-175:
- 19) Վաչուտեանների իշխանական տան պատմությունը,- «Շողակաթ» (Եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդես), Ստանպոլ, 1995, էջ 29-54:

А. Г. МАРГАРЯН.  
ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ СДВИГИ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ  
И АРМЯНСКАЯ ФЕОДАЛЬНАЯ ЗНАТЬ  
В XII-ПЕРВОЙ ПОЛОВИНЕ XIV ВВ.  
(Резюме)

Диссертационная работа состоит из предисловия, обзора источников и литературы, двух разделов, послесловия и списка использованной литературы.

Первый раздел предваряется наблюдениями, характеризующими геополитическое положение Армении в исследуемую эпоху. В последующих четырех главах показано влияние ближневосточной военно-политической обстановки на развитие ситуации в Армении. Наиболее характерный пример в этом плане-перспектива освобождения Армении в XII-XIII вв.


Борьба между наследниками атабека Элдигюза в 90-х годах XII в. положила конец их влиянию на Ближнем Востоке и ускорила освобождение центральных и северо-восточных районов Армении. В южной Армении, в эмирате Шах-Арменов, сталкивались интересы различных группировок военной служилой знати, чем воспользовались Аюбиды, присоединив Хлат и прилегающие районы к своим владениям. Процесс консолидации был характерным и для северо-западных районов Армении, где небольшие политические единицы подверглись аннексии султанов Иконии. Таким образом, освободительная борьба на юге и северо-западе не имела шансов на успех. Обстановка еще более ухудшилась с первым появлением монголов (1220-1221), а затем и хорезмийцев (1225-1231), остановивших продвижение Захаридов и других армянских правителей. В свою очередь, монгольский поход 1236 г. полностью перечеркнул успех предшествующей эпохи и поставила кавказский мир в исключительно неблагоприятные условия. Историческая перспектива освобождения армянских земель и восстановления независимости страны оказалась нереализованной.

Вассалитет в XII-XIII вв., различия в положении господствующего класса в отдельных частях страны, характер межконфессиональных и межэтнических контактов в среде социальных верхов - основные проблемы, затронутые в предварительной части второго раздела.

Происхождение, локализация владений, конфессиональная ориентация и культурный облик Захаридов, Садунянов (Махканабердци), Вачутянов и Прошянов изучены в отдельных главах, посвященных этим крупным феодальным фамилиям.

В послесловии предлагается периодизация истории армянской феодальной знати. Исследуемая эпоха разделяется на четыре периода: I (начало XII в.- первая половина 80-годов столетия) - времена усиления мусульманских государственных образований и ограничения политических позиций армянских феодалов; II (1186-1235 гг.) - период освобождения армянских областей, укрепления позиций военной элиты в составе господствующего класса; III (1236 год-рубеж XII-XIII вв.) - тяжелый период борьбы армянской феодальной знати за выживание; IV (начало-середина XIV в.) - период упадка крупных феодальных фамилий, потери шансов на восстановление их военной и экономической мощи.

Диссертация представлена на соискание ученой степени доктора исторических наук



HAYRAPET MARGARIAN  
*MILITARY AND POLITICAL CHANGES IN THE NEAR EAST  
AND ARMENIAN FEUDAL ARISTOCRACY  
(12<sup>th</sup>- FIRST HALF OF 14<sup>th</sup> CENTURY)*